

9432

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՀ ԼՈՒՍԱՅՈՂԿՈՄԱՆ

ԶՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

ՔԻՄԻԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԹՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1938


54

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

5-45 ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


54(074) 24 JAN 2007

20 JUL 2010



# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒԹԻՉՆԵՐԻՆ

ՔԻՄԻԱ



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Յերկրորդ կիսամյակում միջնակարգ գպրոցներում քիմիացից ուսումնասիրվում են հետևյալ թեմաները.

7-րդ դասարանում—«Ուսմունք ատոմների ու մոլեկուլների մասին», «Ոքսիդացում—բեղուկցում», «Ոքսիդներ: Հիմքեր: Թղթուներ: Աղեր»:

8-րդ դասարանում—«Ծծումբ», «Ազու և ֆոսֆոր»:

9-րդ դասարանում—«Մետաղներ»:

10-րդ դասարանում—կրկնվում ե անորդանական քիմիայի կուրսը:

Այս ժողովածուն առաջարկվում ե քիմիայի դասառութին՝ նրան շահագույն առաջարկ աշխատանքներին ոգնելու համար: Ժողովածուն կազմված ե ՌՍՖԽՀ ԼՓԿ-ի Միջնակարգ գպրոցի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցների կողմից:


Ըսկ. ի. Ն. Բորիսովի հոդվածում տրվում ե 7-րդ դասարանի ծրագրի մեջ մանող, «ատոմա-մոլեկուլային ուսմունք» թեմայի ամենակարևոր հարցերից մեկի—քիմիական սիմբոլիկայի հարցի ուսումնասիրության մեթոդիկան:

8-րդ դասարանի համար ծրագրի վորենե թեմայի հատուկ մշակումը չի տրված, այլ վերլուծվում ե մի շատ կարևոր հարց՝ հիմնվելով այդ կիսամյակի կոնկրետ վեճմանների վրա, կրկնել և ամրապնդել քիմիայի հիմնական գաղափարները: Մաս աշխատանքի մի ձև ե, վորը կարելի յե կիրառել նաև ուրիշ գասարաններում:

9-րդ դասարանում սկսում են «Մետաղներ» թեման, վորը մշակել ե պրոֆ. Լ. Մ. Սմորգոնինին: Այդ թեմայի շարունակությունը կհրատարակի առանձին պրակտիվ:

10-րդ դասարանի համար առաջարկվում քիմիայի դասառությունների գրած՝ 10-րդ դասարանում անորդանական քիմիայի կուրսը կրկնելու մասին աշխատությունը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Կ Հ 8 9 3 . 6 3

## ՔԻՄԻԱԿԱՆ ՍԻՄԲՈԼԻԿԱՆ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՍԱՍԻՆ<sup>1)</sup>

### 1. ԹԵՍԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին կիսամյակում 7-րդ դասարանի աշակերտները քիմիայից ուսումնասիրել են գլխավորապես ասանձին նյութեր՝ ջուր, թթվածին և ող: Այդ կոնկրետ մատերիալի հիման վրա նրանք արդեն ծանոթացել են քիմիայի հիմնական գաղափարների ու որենքների հետ:

Սակայն, բոլոր այդ գիտելիքները, ըստ եյության հանգիստանում են քիմիայի ուսումնասիրության միայն նախապատրաստական աստիճանը: Խոկ քիմիան, այդքանի բուն իմաստով, սկզբանից ե միայն ատոմա-մոլեկուլային ուսմունքը, վորովհետեւ «...քիմիան կարելի է սահմանել վորպես գիտություն ատոմների մասին...»<sup>2)</sup>:

«Ատոմա-մոլեկուլային ուսումնք» թեմայում վոչ մի գեղաքում չպետք է սահմանափակվել՝ ծանոթացնելով աշակերտներին այդ ուսմունքի հիմնական գրույթների հետ: Բոլոր նախորդ թեմաներում ուսումնասիրած պետք է հիմա բարձրացնել ատոմիստական պատկերացումների ժամանակակից մակարդակի վրա, նկատի առնելով, վոր «քիմիայի նոր դարաշրջանն սկսվում է ատոմիստիկայից»<sup>3)</sup>:

Այս թեմայով ուսուցիչը պետք է.

1) Բացատրի աշակերտներին ատոմա-մոլեկուլային ուսմունքի եյությունը, հասուլք ուշադրություն զարձնելով ատոմների ու մոլեկուլների սեալ գոյությունը վկայող կոնկրետ փաստերի վրա, ինչպես նաև այն հանգամանքի վրա, վոր մոլեկուլը նրա մեջ մասնող ատոմների հասարակ գումարը չե:

1) Կազմեց թ. Ն. Բորիսովը (Միջնակարգ դպրոցի կենտրոնական գիտահանուստական ինստիտուտի ավագ գիտական աշխատակից):

2) Ֆ. Ենգելս—Բնության գիտեկոտեկա, 1936 թ., հշ 79 (ռուսերեն):

3) Ֆ. Ենգելս—նույնը, եջ 115:

2. Բացատրի ու խորացնի աշակերտներին արդեն հայտնի մախնական քիմիական հասկացողություններն ու որենքները ատոմա-մոլեկուլային ուսմունքի տեսակետից:

3. Ծանոթացնի աշակերտներին քիմիական լեզվի հետ, վորպես մի միջոցի, վորով ատոմա-մոլեկուլային ուսմունքի հիմնական դրույթներն են արտահայտվում և ուսակցող նյութերի վոչ միայն վորակական, այլև քանակական բաղադրությունն և արտահայտվում:

4. Ծույց տա աշակերտներին քիմիական ֆորմուլների ու հավասարումների գործնական կիրառման յեղանակները: Պարզագույն քանակական հաշվումների և, մասնավորապես, արտադրական խնդիրներ լուծելու համար:

Այս աշխատությամբ մենք սահմանափակվում ենք համեմատաբար նեղ նպատակով, այս Է՝ տալ մեթոդական մեկնաբանում միայն վերջին յերկու խնդիրներին՝ այսինքն՝ տալ դասատուին մեթոդիկա՝ ծանոթացնելու աշակերտներին քիմիական սիմբոլների ու ըստ ֆորմուլների և հավասարումների հաշվումներ կատարելու հետ:

Թեմայի այս հատվածի վիճակը դպրոցական պրակտիկայում բավական անմիտիքար է: Դպրոցների աշխատանքի փորձի ուսումնասիրությունը Միջնակարգ դպրոցի ինստիտուտի (նախկին Պոլիտեխնիկ կրթության ինստիտուտի) կողմից մի շարք տարիների ընթացքում, ինչպես նաև ՌՍԽՖՀ զանազան մարզերի ու շրջանների դպրոցների ընտրական հետազոտության նյութերը, ակնհայտորեն ցույց են տալիս, վոր թե քիմիական լեզուն և թե հաշվումներն ըստ ֆորմուլների ու հավասարումների՝ աշակերտները շատ մեծ գժվարությամբ են յուրացնում:

Աշակերտներին սովորաբար զժվարություն և պատճառում:

ա) բարդ նյութի մեջ յեղած ելեմենտների քանակական հարաբերությունը վորոշելը.

բ) Ելեմենտների սահմանական սորոշական գորշելը նրա միացություններում:

գ) Գործակիցների տեղադրումը քիմիական հավասարություններում:

դ) Քիմիական ֆորմուլների ու հավասարումների կիրառում՝ գործնական խնդիրներ լուծելու համար:

Բացի դրանից, աշակերտներն իրենց ուսման այդ աստիճանում շատ հաճախ շփոթում են K և Ca, Na և N, Cu և C,

Հու և Մց քիմիական նշանները նշանակելու մեջ, ինչպես նաև գժվարանում են կարդալ C, S, Cl, N, Մց քիմիական նշանները (չեն կարդում ցե, ես, են, այլ ասում են ելեմենտի լրիվ անունը — տծխածին, ծծումբ, աղոտ, իսկ Cl, Մց նշանները, ընդհակառակը, կարդում են վոչ թե «քլոր», «մազնեղիում», այլ «ցիս-էլ» և «եմ-գե»):

Ի՞նչ պետք է այսեղ յարացնի աշակերտը

Վերհիշված գժվարությունների հիմնական պատճառը, ինչպես դա ցույց է տալիս մասսայական դպրոցի ուսումնասիրությունը, հետեւանք և այն բանի, վոր թերագնահատվում են քիմիական սիմբոլիկայի յուրացման գժվարությունները:

Շատ դպրոցներում քիմիական սիմբոլիկայի հարցերն անցնում են շատ թուուցիկ ձևով: Այդ պատճառով եւ աշակերտները քիմիական լեզվով ոգտվելու գոնե ամենաատարբական ունակություն չեն ձեռք բերում:

Սակայն, դպրոցական պրակտիկայում տեղի յեւ ունենում մի ուրիշ ծայրահեղություն են: Մի քանի դասաւումներ, ընդհանակառակը, համարյա ամբողջ «Ասոմա-մոլեկուլային ուսումնք» թեման վերածում են լոկ քիմիական սիմբոլիկայի և ըստ փորձությունների ու հավասարությունների քանակական հաշվումներ կատարելուն:

Դաստուները վոչ միշտ նետարյամբ զնուիտում են թեմայի այս մասի նեանակուրյունը, մոռանալով, վոր «Ասոմա-մոլեկուլային ուսումնք» թեմայի մեջ քիմիական սիմբոլիկան ու քանակական հաշվումները վոչ թե հիմնական, այլ կիրառական դեր ունեն և վոր այսեղ դրվում է քիմիական լեզվի նախնական հիմքը:

Ահա թե ինչու մենք անհրաժեշտ ենք համարում խսորեն ձշտել մեր պահանջներն աշակերտներից քիմիական սիմբոլիկայի մասում:

«Ասոմա-մոլեկուլային ուսումնք» թեմայի այս մասի ուսումնասիրությամբ աշակերտը պետք է ձեռք բերի միայն ամենասկզբական գիտելիքները և կարողությունները: Նա պետք է —

1) իմանա կարեռագույն ելեմենտների քիմիական նշաններն ու ատոմական կշիռները (տես ստորև):

2) Հասկանա քիմիական փորմուլի նշանակությունը.

ա) Կարողանա անվանել փորմուլ կազմող ելեմենտների անունները,

բ) ցույց տա նրանց քանակությունը,

գ) քիմիական փորմուլի մեջ տեսնի փորմուլը կազմող ելեմենտների քանակական հարաբերությունները,

դ) յուրաքանչյուր փորմուլ քննարկի բաղադրության հասաւառունության որենքի տեսակետից:

3) Կարողանա ոգտվել կարեռագույն ելեմենտների ու նրանց ատոմական կշիռների աղյուսակից (դասագրքի կամ պատին կախածի):

4) Կարողանա գրել ու կարգավառ նախապես իր ուսումնասիրած քիմիական ուսակցիաների ամենապարզ քիմիական հավասարությունները:

5) Հասկանա քիմիական հավասարման լրիվ նշանակությունը.

ա) հավասարումը կապի բուն քիմիական պրոցեսի հետ,

բ) զործակիցները տեղադրի պատրաստի հավասարության մեջ (յուրաքանչյուր փորմուլում զործակիցը պարզորոշ տարրերելով ատոմների թիվը ցույց տվող ցուցիչներից),

գ) հասկանա, վոր քիմիական հավասարումն արտահայտում և քանակական հարաբերությունները ուսակցող նյութերի միջև,

դ) քիմիական յուրաքանչյուր հավասարումը քննարկի նյութերի կշռի պահպանման որենքի տեսակետից:

6. Ոգտագործի ելեմենտների քանակական հարաբերությունները փորմուների ու հավասարումների մեջ զործնական խնդիրներ լուծելու համար:

Թեմայի այս հատվածում հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել քիմիական նշանների, փորմուների և հավասարումների քանակական ու վորակական նշանակությունների կապերի վրա: Պետք է ձգտել վար աշակերտներ միշտ բլբանեն իմիքական սիմբոլիկան: Աշակերտը պետք է իմանա, վոր յարացնյաւր քիմիական նշան, փորմուլ և հավասարում արտահայտում է միտամանակ նրան համապատասխանող կօտարաբար այս կողմի վրա ամենաին բավարար ուշադրություն չի գարձնում: Մինչդեռ հենց դա յեւ հիմնական պատճառը, վոր աշակերտները գժվարանում են քանակական հաշվումներ կատարել և վերջիններից ոգտվել զործնական խնդիրներ լուծելիս: Այդ տեսակետից

մեծ գեր պետք է խաղան հատուկ վարժությունները, վորոնց վրա հետագայում մենք առանձնապես կանգ կառնենք:

Աշակերտները հավասարումները պետք է կազմեն մոլեկու-

Այս ձևով Դամար նրանք պետք է իմանան թթվածնի, աղուտի և ըլորի մոլեկուլար բաղադրությունը:

Աշակել տներից չպետք է պահանջել կազմել քիմիական փորձումն ըստ անալիզի տվյալների: Միանգամայն բավական է, վոր նրանք մի վորեւ ամենապարզ կոնկրետ որինակի վրա ցույց տան, թե այդ մասին նրանք գաղափար ունեն:

Խսկ ի՞նչ վիճակումն է սիմբոլիկայի նորցը քեմայի ընդհանուր սիստեմում:

Դպրոցներում քիմիական սիմբոլիկային անցնում էն, սովորաբար՝ նյութի կառուցվածքի տեսակետից քիմիական գաղափարներն ու որենքները քննարկելուց հետո միայն:

Նյութի այդպիսի հաջորդականությունը՝ «Ատոմա-մոլեկուլային ուսմունք» թեմայում, ինչպես վորձը ցույց է տալիս, չկարելի միանգամայն բավարար համարել:

Նախ այդպիսով խանգարվում է ատոմա-մոլեկուլային ուսմունքի կապը սիմբոլիկայի հետ:

Յերկրորդ այդպիսի սիստեմը չի ապահովում քիմիական գաղափարների ու որենքների լիակատար զիտալցական ու բավարար չափով խորը քննարկումը առոմա-մոլեկուլային ուսմունքի տեսակետից, վորովհետև մի շարք գաղափարներ (որինակ՝ «պարզ նյութ» և «Ելեմենտ», «քիմիական սեալցիա», «բաղադրություն հաստատունության որենք»), վորոնք տրվում են մինչև սիմբոլիկան անցնելը, աշակերտները համարյա չեն յուրացնում:

Ահա թե ինչու մեթոդականորեն շատ ավելի նպատակահարձար է, գիտականորեն ել շատ ավելի ճշշտ և այդ սովորական, տրադիցիոն սիստեմը փոխիր: «Նյութերի կառուցվածքը մոլեկուլներից և ատոմներից» բաժինը չպետք է ընդհատվի ատոմա-մոլեկուլային ուսմունքի հիմնական գաղափարները քննարկելուց հետո, այլ պետք է հասցի մինչենրա տրամարանական գախճանը, այսինքն՝ պետք և վերջացնել այն, ծանոթացնելով աշակերտներին ատոմների, մոլեկուլների ու քիմիական սեալցիաների նշանակման ձևերի հետ: Խսկ քիմիայի հիմնական գաղափարների ու որենքների վերանայումը ատոմա-մոլեկուլային ուսմունքի տեսակետից պետք է կատարել աստիճանաբար, ամբողջ թեմայի ուսումնասիրության ընթացքում:

«Ատոմա-մոլեկուլային ուսմունք» թեմայի ուսումնասիրության հետեւյալ որինակելի պլանը կարելի յէ տուր, վորից հեշտու-

թյամբ վորոշվում է տվյալ թեմայի քննարկելիք հարցերի տեղն ու փոխնարարելությունը:

Հստ ծրագրի «Ատոմա-մոլեկուլային ուսմունք» թեմային հատկացվում է 14 ժամ: Այդ ժամանակի սահմաններում անցնելու նյութը կարելի յէ զատավորել մասավորապես հետեւյալ ձևով:

1. Նյութի մոլեկուլայի կառույցը—1—2 ժամ:
2. Նյութ: Մոլեկուլը: Ատոմ—2 ժամ:
3. Ատոմա-մոլեկուլային ուսմունքի հիմնական գրույթները—1 ժամ:

4. Ելեմենտների քիմիական նշանները—1 ժամ:
5. Քիմիական փորձուներ և հաշվումներ նրանց հիման վրա: «Պարզ նյութ», «բարդ նյութ» և «Ելեմենտ» «Ալուտրոպիա» գաղափարները, ինչպես և «բաղադրության հաստատունության որենքը» ատոմա-մոլեկուլային ուսմունքի լուսաբանությամբ—4 ժամ:

6. Քիմիական հավասարություններ և հաշվումներ ըստ նրանց: Քիմիական սեալցիա և նյութերի կրոփ պահպանման որենքը ատոմա-մոլեկուլայի ուսմունքի լուսաբանությամբ—3—4 ժամ:
7. Ամբողջ թեմայի նյութի կրկնությունը—2 ժամ:

## 2. ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ատոմա-մոլեկուլային ուսմունքի հիմնական գրույթները յուրացնելուց հետո միանգամայն բնական և ատոմների պայմանական նշանակման ձևին—Ելեմենտների քիմիական նշաններին անցնելը:

Ելեմենտների քիմիական նշանների հետ աշակերտներին կացնելի յէ ծանոթացնել հետեւյալ հաջորդականությամբ.

ա) Քիմիական սիմբոլիկայի համառոտ պատմությունը մինչև Դալաննը:

բ) Դալաննի քիմիական նշանները:  
գ) Բևլցելիուսի սիմբոլիկան:  
դ) Կարեւորագույն Ելեմենտների նշանները:

Քիմիական սիմբոլիկայով աշակերտները սովորաբար շատ են հետաքրքրվում: Աշակերտների այդ հետաքրքրությունը պետք է մաքրիմալ չափով խրախուսել ու ոդագործել: Քիմիական սիմբոլիկան ուսումնասիրելիս պետք է խուսափել ֆորմալիզմից և անցկացնել այն ինչքան կարելի կենդանի ձևով:

Լավ և ոկտել քիմիական նշանակումների հիմյուցիայից—ցույց տալ հետեւյալը.

Դեռ հնագույն ժամանակներում գիտնականները փորձում էին նշանակել աստղամերը պայմանական նշաններով, ինչպիսիք են:

Օ — Վուկի (արեգակ) ♀ — Անդիկ (մերկուր)

Կ — Արծաթ (լուսին) ♀ — Աղինձ (վեներա)

Հետագայում սկսեցին ոգուկել ավելի պարզեցրած պայմանական նշաններով, որինակ՝

— Ազու	—	Օ — Ածխածին
— Թթվածին	—	Ֆուֆոր
Կ — Ջրածին	—	Ճծումբ

Դրա հետ միասին, մոտ 150 տարի սրանից առաջ, հանդիսական նաև տառային նշանակումներ, ինչպիսիք են:

Ⓐ — Արծաթ (argent)

Ը — Աղինձ (copper)

Պ — Կապար (plomb)

Բայց բոլոր այդ պայմանական նշանները համապատասխան ասոմի միայն վարակն եյին նշանակում: Յեկ միայն Դարտունն եր, վոր իր վորոշած աստղամերան կշիռների հիման վրա, ամեն մի ասոմի նշանի հետ կապեց նաև նրա բանական նշանակումները:

Դասագրքի աղյուսակում (եջ 51) պետք եւ ցույց տաք, կար Դալտոնը՝ աստղները նշանակելու համար, նույնապես ոգտվում եր թե պայմանական նշաններով և թե տառերով: Շատ կարեոր է նշել, վոր նրա տառային նշանակումները հետևյալն եյին:

Ժ — յերկաթ Լ — Կապար

Զ — Յինկ Տ — արծաթ

Ը — Աղինձ

Ինչպես տեսնում ենք, այդ նշանները աստղերվում եյին յամանակակիցներից:

Տեղն ու տեղը, Դալտոնի ֆորմուլների օբյնակների վրա (դասագրքի եջ 52) կարեոր է նշել, վոր աստղների նշանակումն բառ Դալտոնի՝ շրջաններով, շատ անհարմար են:

Դրանից հետո միայն կարելի յե ծանոթացնել աշակերտներին Բերցելիուսի առաջարկած ժամանակակից սիմբոլիկայի հետ (դասագրքի եջ 58):

Դա կատարվում է, մոտավորապես, հետևյալ ձևով: Սկզբում աշակերտներին պետք է հայտնել, վոր ներկայումս ելեմենտների աստղները նշանակում են միմիայն լատինական այբուբենի տառերով: Այդ տառերը ելեմենտների լատինական (յերբեմն և հունական) անունների սկզբնատառերն են: Այսպիսս, որինակ, թթվածինի նշանն է «Օ»—սա սկզբնատառն է նրա լիրիվ անվան—Oxygenium: Իսկ այն դեպքերում, յերբ մի քանի ելեմենտների անուններն սկսվում են միենույն տառով, ապա ելեմենտը նշանակելու համար ոգտվում են յերկու տառով: Որինակ, մագնեզիումի ու մանգանի նշաններն իրար հետ չշփոթելու համար, նրանց նշանակում են համապատասխանաբար՝ Mg և Mn:

Այստեղ շատ կարեոր է շեշտել, վոր աստղների քիմիական նշաններն արտահայտում են տվյալ ասոմի վոչ միայն անունը, այլև նրա թվական հարաբերությունը—աստղամերան կշիռը: Այսպիսս որինակ, «Օ» նշանը միայն թթվածին չի նշանակում, այլ

դրա հետ միասին նշանակում են, վոր դա 16 կշռամաս թթվածին է (Նրա առոմական կշռով 16 է):

Քիմիական սիմբոլիկայի խմանափառ այլպիսի համառոտ բացատրությունը հասու կարելի յէ ավելի մանրամասնորեն կանգ առնել դասապրքի «Ատոմների քիմիական նշանների» և կարևորագույն եղեննունների առոմական կշռների» աղյուսակի վրա (Էջ 96, Հայերեն<sup>1)</sup>): Ամենից լավ և աղյուսակը հետևյալ կարգով քրնարկել:

- ա) ելեմնափառ անունը սուսելին (կամ տեղական լեզվով),
- բ) նրա անունը լատիներեն,
- գ) լատինական անվան արտասանումը,
- դ) ելեմնափառոմի քիմիական նշանը,
- ե) քիմիական նշանի արտասանումը ֆորմուլի մեջ, և վերաբերեալ,
- զ) ավյալ ելեմնափառ առոմական կշռով:

Աղյուսակը գիտելիս աշակերտները պետք են վոչ միայն ձիտ անվանեն առոմական քիմիական նշանները, այլև կարողանան բացատրել նրանց իմաստը:

Դասի վերջում, ուզովելով քիմիական նշանների աղյուսակից, շատ ոգտակար են հետեւյալ վարժությունները կատարել:

- ա) գրատախոտակի վրա դասառաւն զրում և քիմիական նշանները, իսկ աշակերտներն անվանում են զրանք,
- բ) գասատուն անվանում և քիմիական նշանները և առաջարկում և աշակերտներին զրել (մեկը գրատախոտակին, իսկ մյուսները աետրակներում):

Քիմիական նշանները ճիշգության մեջ ամրացնելու համար աշակերտներին պետք են տալ անային աշխատանք.

- ա) արտազրել աղյուսակից (դասազիրք, Էջ 96) ելեմնաների բոլոր նշանները և նրանց առոմական կշռները,
- բ) վարժվել ըստ ելեմնաների անունների զրել նրանց նշանները և, հակառակը, ըստ պատրաստի նշանների ճշտությամբ տալ նրանց անունը:

### 3. ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՐԾՈՒԼԵՐ ՅԵՎ ՀԱՇՎՈՒՄՆԵՐ ՆՐԱՆՑՈՎ

Այս բաժնում աշակերտների նախնական գիտելիքները քիմիական սիմբոլիկայի մասին զգալիորեն ընդարձակվում են: Այստեղ նրանք տեղեկանում են, վոր—

1. Քիմիական նշաններով արտահայտվում են նյութերի գումարայն առոմական կարգությունը, այլև նյութերի մոլեկուլարները:

2. Քիմիական գորմուլներն արտահայտվում են նյութերի գումարայի միայն գորակական, այլև քանակական բաղադրությունը:

3. Առոմական կշռների գումարը հավասար ե մալեկուլային կշռին, իսկ մոլեկուլային կշռով՝ արտահայտած գրամմերով՝ կոչվում ե ավյալ նյութի գրամմոլեկուլային կշռ:

4. Քիմիական գորմուլները հնարավորություն են տալիս զանազան քանակական հաշվումներ կատարելու և գործնական ինդիքներ լուծելու:

5. Տվյալ նյութի քիմիական գորմուլը գտնում են այդ նյութի գորակական ու քանակական անալիզի տվյալների հիման վրա:

Բացի վերոհիշյալ գիտելիքներից, այս բաժնում աշակերտները նաև նախնական ունակությունն են ձեռք բերում:

1) ցույց տալու նյութի մոլեկուլը կազմող առոմական քիմիքը,

2) կարդալու պատրաստի գորմուլները,

3) ըստ գորմուլի գտնելու նյութի մոլեկուլային կշռով,

4) զորչելու մոլեկուլի բաղադրիչ մասերի քանակական հարաբերությունը,

5) ըստ գորմուլի լուծելու պարզագույն գործնական խընդիքներ:

Բոլոր այդ գիտելիքներն ու կարողությունները աշակերտները ձեռք են բերում խստորեն վրոշված սրբածնով:

Դասն սկսվում ե քիմիական նշանների համառոտ կրկնությամբ:

Աշակերտները, ուսուցչի առաջարկությամբ, գրատախոտակի վրա զրում են կարենուագույն ելեմնաների՝ թթվածնի, ջրածնի, ազոտի, ծծմբի, ֆոսֆորի, ցինկի, կալիումի, նատրիումի, կալցիումի, պղնձի և յերկաթի առոմական նշանները:

Ամեն մի առոմի նշանի տակ զրվում ե նրա առոմական կշռով:

Ամեն մի նշանի անվան հետ կապվում ե նրա քանակական նշանակությունը:

Այնուհետև դասառուն գրատախոտակի վրա զրում ե ելիք միքանի ելեմնաների՝ Ag, Cl, Al, Mg, Hg—առոմական նշանները:

Աշակերտներն այդ նշաններն անվանում են և զամազրիքի

<sup>1)</sup> Հայերեն, 1936 թ., հրատ.:

ազյուսակի (հջ 98) ողնությամբ ցույց են տալիս նաև նրանց քանակական նշանակությունը:

Այդպիսի կվինությունից հետո միայն կարելի յե ծանոթացնել աշակերտներին քիմիական ֆորմուլների հետ:

Քիմիական ֆորմուլի մասին հասկացողություն տրվում է մի վարեկ պարզագույն որինակով թեկուղ հենց յերկաթի սուլֆիդի:

Յերկաթի սուլֆիդի բաղադրությունը աշակերտները գիտեն: Ծծմբի և յերկաթի քիմիական նշանները նույնպես նրանց հայտնի յեն: Դասատուին մնում է միայն այդ նշանները գրել FeS ֆորմուլի ձևով, կարդալ այն (ֆերրոմեխ) և ցույց տալ, վորայդ ֆորմուլին արտահայտում ե.

ա) նյութի համառոտ անունը (յերկաթի սուլֆիդ),

բ) ատոմների թիվը այդ նյութի մոլեկուլում (մի ատոմ յերկաթ և մի ատոմ ծծումբ),

գ) նրան կազմող ելեմենտների ատոմների կշռային հարաբերությունը (56 կրոամաս յերկաթ և 32 կրոամաս ծծումբ կամ 7 կրոամաս յերկաթ ու 4 կրոամաս ծծումբ) և

դ) նյութի մոլեկուլային կանոնը, վորպես այդ նյութը կազմող ելեմենտների ատոմական կշռների գումար.

FeS

— 56+32=88

Յերկաթի սուլֆիդի բաղադրության մեջ մտնող ատոմների կշռային հարաբերության կապակցությամբ պետք ե հիշատակել բաղադրության հաստատունության որենքը: Բացատրվում է, թե ինչու յերկաթի սուլֆիդ ստանալու համար (քիմիայի կուրսի սկզբում) մենք վերցնում ենքինք 7 գրամ յերկաթ և 4 գրամ ծծումբ: Բաղադրության հաստատունության որենքն այժմ շարադրվում է հետեւյալ ձևով. Այսրեւն իրաւ հետ միանաւմ են խիստ վարուակի կուտային հարաբերություններով այն պահանջման, որ օրվայի նյութի մոլեկուլները բաղկացած են վարու բառուներից, վարաց բար միեւ հատատան ե:

Նման ձևով քննարկվում ե ևս մի վարեկ ֆորմուլ որինակ CaO:

Այդ որինակը ևս վերլուծվում ե հետևյալ ձևով:

ա) ինչպես ե կարգացվում CaO ֆորմուլը:

բ) Վար նյութն ե այդ ֆորմուլով նշանակվում:

գ) Ի՞նչ ելեմենտներից ե բաղկացած պղնձի ոքսիդը:

դ) Ի՞նչ ե արտահայտում CaO ֆորմուլը:

ե) Վարքամն են պղնձի և թթվածնի առամական կշռները: զ) Ինչպես գտնել պղնձի ոքսիդի մոլեկուլային կշռը, և, վերջապես

է) Այս որինակի վրա ինչպես կարելի յե բացատրել բազագության հաստատունության որենքը:

Այնուհետև բերվում են ավելի բարդ ֆորմուլներ. H<sub>2</sub>O, SO<sub>3</sub>, CO<sub>2</sub> և այլն: Եշլում ե, վոր ատոմների թիվը մոլեկուլի մեջ նշանակվում ե փոքրիկ թվանշանով՝ համապատասխան ելեմենտի սիմբոլի կողքին: Այսուղ ևս, ինչպես և նախորդ որինակներում, աշակերտները՝ ա) կարդում են ֆորմուլները (հաշվերկու ո, ցեղ յերկու և այլն), բ) ցույց են տալիս նրանց ելեմենտար բաղադրությունը և քանակական նշանակությունը, գ) վորոշում են նյութի մոլեկուլային կշռը, դ) բացատրում են բաղադրության մնայնության որենքը:

Հետո դասատուն գրում ե գրատախտակի վրա ել ավելի բարդ ֆորմուլներ. Fe<sub>2</sub>O<sub>3</sub>, Al<sub>2</sub>O<sub>3</sub>, P<sub>2</sub>O<sub>5</sub>, N<sub>2</sub>O<sub>5</sub>, HNO<sub>3</sub>, CuSO<sub>4</sub>, CuSO<sub>3</sub>, H<sub>2</sub>SO<sub>4</sub> և այլն:

Ոգովելով քիմիական նշանների ազյուսակից (դասագիրք, հջ 98), աշակերտները կարդում են այդ ֆորմուլները, հատուկ ուշագրություն դարձնելով, վոր քիմիական նշանի կողքի թվանշանը վերաբերում ե միայն այն ելեմենտին, վորի կողքին նա գլուխած ե: Նույնականացնելով աշակերտը գաղափար ե կազմում նաև այնպիսի ֆորմուլների մասին, ինչպիսիք են:

NaOH, Ca(OH)<sub>2</sub>, Fe(OH)<sub>3</sub>, Al(OH)<sub>3</sub>,

NaNO<sub>3</sub>, Cu(NO<sub>3</sub>)<sub>2</sub>, Al(NO<sub>3</sub>)<sub>3</sub>, Al<sub>2</sub>(SO<sub>4</sub>)<sub>3</sub> և այլն:

Դասատուն այդ ֆորմուլներն աստիճանաբար գրում ե գրատախտակի վրա: Բացատրում ե փակագծերի ու նրանց կողքին գրած թվանշանների իմաստը: Կարդում ե նատրիում-ու-հաշ, կալցիում-ու-հաշ յերկու անգամ և այլն, ցույց ե տալիս նրանց իմաստը:

Աշակերտներն այնուհետև կարդում են անալոգ ֆորմուլներ և բացատրում նրանց նշանակությունը:

Այդպիսով աշակերտները ծանոթանում են բարդ նյութերի քիմիական ֆորմուլների հետ:

Դրանից հետո աշակերտների ուշագրությունը հրաժիրվում է այն բանի վրա, վոր քիմիական ֆորմուլներով նշանակվում են վոչ միայն բարդ, այլև պարզ նյութերի մոլեկուլները: Այսպես,

որինակ, թթվածնի յերեք ատոմից կազմված ողոնի մոլեկուլի ֆորմուլն է— $O_2$ , իսկ սովորական թթվածնի մոլեկուլինը— $O_2$ :

Թթվածնի անալոգիայով, գրատախտակի վրա գրվում են նաև ուրիշ պարզ նյութերի<sup>1)</sup>  $H_2$ ,  $N_2$ ,  $Cl_2$  մոլեկուլների ֆորմուլները: Յերկու ատոմ պարունակող պարզ նյութերի բոլոր այդ ֆորմուլներն աշակերտները գրանցում են սերտելու համար: Նույն տեղում (հետադայում շփոթելուց խուսափելու համար) դասառուն հատկապես նշում ե, վոր մի քանի առողմաներից բաղկացած են միայն փոքրաթիվ պարզ եկեմնատների մոլեկուլները, իսկ պարզ նյութերի մեծ մասի մոլեկուլները (որինակ՝ բոլոր մետաղների) բաղկացած են միայն մեկ ատոմից:

Այսուհետև աշակերտները վարժվում են քիմիական ֆորմուլներ գրելուն ըստ տվյալ մոլեկուլի ատոմների թվի և ըստ համապատասխան ատոմների նշանների անվան: Դասառուն առաջարկում ե, որինակ՝

ա) գրել հետեւյալ ֆորմուլները՝ կուլում-ո, յեռ-յերկու, փերում-յերկու-ո-յերեք, կալցիում-ո-հաշ-յերկու անդամ, կալցիում-ո-յերեք-յերկու, անդամ, ալյումինիում-յերկու-հո-ո-չորս-յերեք անդամ և այլն.

բ) գրել այն նյութերի ֆորմուլները, վորոնք բաղկացած են՝ մեկ ատոմ ցինկից ու մեկ ատոմ ծծմբից, յերկու ատոմ կալիումից ու մեկ ատոմ թթվածնից, յերկու ատոմ ֆոսֆորից ու հինգ ատոմ թթվածնից, մեկ ատոմ յերկաթից ու յերեք  $OH$  խմբից, յերկու ատոմ ջրածնից, մեկ ատոմ ածխածնից ու յերեք ատոմ թթվածնից, մեկ ատոմ պղնձից ու յերկու  $OH$  խմբից, մեկ ատոմ կալցիումից և յերկու  $NO_3$  խմբից, յերկու ատոմ ալյումինիումից ու յերեք  $SO_4$  խմբից.

գ) կարգալ գրած բոլոր ֆորմուլներն ու բացարկել նրանց նշանակությունը:

Այդպիսով աշակերտները ձեռք են բերում նախնական կարողություն քիմիական ֆորմուլները կարդալու և գրելու:

Շարունակ շնչառում ե, վոր քիմիական ֆորմուլն արտահայտում և նյութի թե վորակական և թե քանակական բաղադրությունը:

Հստ Փորմուլների քանակական հաշվումներ կատարելու գործում աշակերտները պետք ե կարողանան վորոշել. ա) նյութերի մոլեկուլային կշիռը, բ) մոլեկուլի բաղադրիչ մասերի կշային հարաբերությունները և գ) բարդ նյութի տոկոսային բաղադրությունը: Դրա համար ոգտագործվում են նախորդ գասերում գրած

ֆորմուլները: Աշակերտները ցույց են տալիս, վոր, որինակը, յերկաթի սուլֆիդի բաղադրության մեջ մտնում են 56 կշռամաս յերկաթ և 32 կշռամաս ծծմբը: Այս տվյալների հիման վրա նրանք գտնում են, վոր յերկաթի սուլֆիդը բաղկացած է  $63,6\%$  յերկաթից և  $36,4\%$  ծծմբից:

56 կշռամաս	$88 \frac{\text{կշռամաս}}{\text{—}} 100\%$
32      »	$56 \quad » \quad —x$
88 կշռամաս	$x = \frac{100 \times 56}{88} = 63,6\%$
	$100\% - 63\% = 36,4\%$

Քանակական հաշվումների ժամանակ հասուլ ուշադրություն պետք ե գարձնել այդ հաշվումների ճշտության վրա ավելի բարդ դեպքերում, ինչպիսիք են որինակ՝



և այլն:

Դասարանում աշակերտները կանգ են առնում միայն մի քանի ամենատփակի որինակների վրա: Իսկ ֆորմուլներով քանակական հաշվումներ անելու վարժությունների մեծ մասը աշակերտները կատարում են տանը:

Թիմիական ֆորմուլների նշանակությունն ընդգծվում է պարզագույն գործնական նայիններ լուծելիք: Դրա համար ոգտագործվում ե գասագրքի և խնդրագրքի նյութը: Տրվում են ամենաասարակ խնդիրներ, առանց հասուլ թվարանական բարդացումների: Այդ անսակեաից ամենահարմար խնդիրներն են.

1. Ինչքամն կապար կարելի յետանալ 478 տոնն կապարի փայլից, վորի ֆորմուլն և  $PbS$ :


2. Քանի՞ կիւսպամ ցինկի սուլֆիդից  $ZnS$  կարելի յետանալ 25 կգ ցինկ:

3. Վորոշել թե հանքանյութերից վրելը, կարմիր յերկաթաքարը (հեմատիտ)  $Fe_2O_3$ , թե մաղնիսական յերկաթաքարը  $Fe_3O_4$  պիկելի հարուստ և յերկաթով<sup>1)</sup>:

4. Հետեւյալ միացություններից վրեն և թթվածնով ամենահարուստը, ջելը  $H_2O$ , բերթության մղը  $KClO_3$ , կամ մաղերմանգանմատը  $KMnO_4$ , թե ջրածնի պերոսիդը  $H_2O_2$ :

5. Կապարի ոքսիդի ֆորմուլն ե  $FeO$ , իսկ կապարի դիոքսի-

<sup>1)</sup> Ворковский В. Н.—Неорганическая химия, 1935, стр. 65.



գի՞նը—РbO<sub>2</sub>: Քանի՞ անդամ ավելի թթվածին և պարունակում  
կապարի գիրքսիթը նույն քաշով կապարի ոքսիդից<sup>1)</sup>:

Խնդիրներ լուծելիս աշակերտները ծանոթանում են «գրամ-  
առում» և «գրամ-մոլեկուլ» գաղափարների հետ:

Վերջապես աշակերտները ծանոթանում են, թե ի՞նչպես կազմ-  
վում են բիմիական ֆորմուլներն ըստ անալիզի ավալների:

Այս մոմենտն առանձնապես չի ընդգծվում, դրա համար բա-  
վական են յերկուշերեք ամենապարզ որինակներ, ինչպիսիք են.

1. Գաղի բաղադրության մեջ մտնում են յերեք կշռամաս  
ածխածին և ութ կշռամաս թթվածին: Քանի՞ առում ածխածնից ու  
քանի՞ առում թթվածնից և բաղկացած այդ գաղի մոլեկուլը:

2. Մագնելիումի այրումից ստացվում է սպիտակ փոշի—այր-  
ված մագնեզիա, վորը պարունակում է 60% մագնեզիում և 40%  
թթվածին: Ինչպես և այրված մագնեզիայի վորմուլը:

3. Ինչպես և ճահճային գաղի (մեթանի) ֆորմուլը, վորը  
բաղկացած է 75% ածխածնից և 25% թթվածնից:

Ավելի բարդ որինակ վերցնել և գտնել յեռյակ միացություն-  
ների (չլիփական սալպետերի, պոտաշի և այլն, ինչպես տրված և  
դասագրքում) ֆորմուլը, գործնական տուանձին իմաստ չունի:

Աշակերտներին այստեղ չեն սովորեցնում գտնել վորեն նյու-  
թի ֆորմուլը: Քիմիայի նախնական կուրսում զա նրանց հարկա-  
վոր չեն դրա համար պահանջվում և շատ մեծ ժամանակ: Ամենից կարևորն է այստեղ գաղափար տալ, թե քիմիական ֆոր-  
մուլը արտածվում է անալիզի տվյալներից և վոր ավելի հարմար  
և հաշվումն սկսել ավելի մեծ առումական կշիռ ունեցող ելեմենտից:

Այսպես, որինակ, առաջին խնդիրը լուծելիս պետք է հետե-  
վյալ կերպ դատել: ըստ Խնդիրի պայմանի 3 կշռամաս ածխածնին  
ընկնում և 8 կշռամաս թթվածին, այսինքն, 3 կշռամաս C—8  
կշռամաս O: Յենթադրենք, թե տվյալ գաղի մոլեկուլի մեջ մըտ-  
նում է մեկ առում ածխածին: Իսկ ածխածնի առումական կշիռն է  
12: Այդ գեղքում 12 կշռամաս անհածնին ընկնում և x կշռա-  
մաս թթվածին: Վերել գրածի հետ միասին զա արտահայտվում  
և այսպես՝

3 կշռամաս C—8 կշռ. 0

12      »      —x      »

$$x = \frac{12 \times 8}{3} = 32 \text{ կշռամաս } 0$$

<sup>1)</sup> Гольдфарб Я. А. и Сморгонский Л. М.—Задачи и уп-  
ражнения по химии, стр. 13—14, № № 43 и 44.

Ուրեմն 12 կշռամաս ածխածնին ընկնում և 32 կշռամաս  
թթվածին: Ածխածնի ու թթվածնի այդպիսի հարաբերությունը  
(12:32) պահպանվում է, ի հարկի, գաղի վորեն քանակության  
մեջ և, հետեւապես, նաև այդ գաղի մոլեկուլի մեջ: Իսկ եթեմենտ-  
ների ատոմների կշռային քանակները մոլեկուլի մեջ հարաբերում  
են իրար, ինչպես յուրաքանչյուր ելեմենտի ատոմական կշռները  
(կամ նրանց գումարները): Ածխածնի ատոմական կշիռն է 12,  
իսկ թթվածնինը—16: Յեթե տվյալ գաղի մոլեկուլում գտնվեյին  
ածխածնի մեկական ատոմ, ապա այդ ելեմենտների  
կշռային հարաբերությունը կլիներ 12:16: Մինչդեռ մեր անալի-  
զի ավալներից բարեւում է 12:32 հարաբերությունը:

Այստեղից պարզ է, վոր ուսումնասիրվող գաղի մոլեկուլը  
բաղկացած է մի առում ածխածնից (12:12=1) և յերկու առում  
թթվածնից (32:16=2): Հետեւապես, տվյալ գաղի պարզագույն  
ֆումուլն է CO<sub>2</sub>:

#### 4. ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՀԱՇՎՈՒՄՆԵՐ ՆՐԱՆՑ ՈԴՆՈՒԹՅԱՄԲ

Թեմայի այս մասում աշակերտները գաղափար են կազմում  
քիմիական հավասարման մասին և հետեւյալ կարողություններն են  
ձեռք բերում:

1) Կարգալ պատրաստի հավասարումը և բացատրել նրա  
նշանակությունը (այդ թվում նաև քանակական նշանակու-  
թյունը):

2) Գրել նախորդ գասերում ուսումնասիրած պարզագույն  
ուեակցիաների հավասարումները.


ա) առանց գործակիցների տեղադրման.

բ) գործակիցների տեղադրումով.


3) Ըստ հավասարումների քանակական հաշվումներ կատա-  
րել և լուծել հասարակ գործնական խնդիրներ:

Քիմիական հավասարման մասին աշակերտները գաղափար  
նն կազմում վորեն հասարակ որինակի վրա, թեկուզ, որինակ,  
յերկաթի սուլֆիդ ստանալու ուեակցիայի վրա: Այս ուեակցիայի  
հավասարումն ըմբռներու համար աշակերտները բոլոր նախադրյալ-  
ներն արդեն ունեն: Նրանք գիտեն, վոր յերկաթի սուլֆիդը  
ստացվում է յերկաթի ու ծծմբի միացումից: Ենթակաթի ու ծծմբի

քիմիական նշանները, ինչպես նաև յերկաթի սուլֆիդի ֆորմուլը,  
նրանք նույնպես գիտեն: Դասատուն գրատախտակի վրա գրում են՝



Նո նշում ե, վոր ռեակցող նյութերի նշանները միշտ պլյուս  
սովոր են կապվում իրար, իսկ ռեակցիայից առաջ վերցված ու  
ռեակցիայից հետո ստացված նյութերի նշանների միջև դրվում  
ե հավասարության ( $\equiv$ ) նշանը: Այսուղ գասատուն հաստիակես  
ընդգծում ե, վոր հավասարության նշանը (=) այս գեղագում ար-  
տահայտում ե նյութերի կշիռների պահպանման որենքը, այ-  
սինքն՝ ռեակցող նյութերի կշիռը հավասար ե ռեակցիայից ստաց-  
վաղ նյութերի կուիմ: Այսուհետեւ գասատուն հաշվում ե.



և ցույց ե տալիս, վոր ռեակցիայի մեջ մտան 56 կշռամաս յեր-  
կաթ և 32 կշռամաս ծծումք, ընդամենը 88 կշռամաս և յերկաթի  
սուլֆիդ ստացվեց նույնպես 88 կշռամաս:

Նույն որինակի վրա գասատուն պարզաբանում ե քիմիա-  
կան հավասարման իմաստը և ընդգծում, վոր քիմիական հավա-  
սարումը արտահայտում ե.

ա) ռեակցիային մասնակցող ու ռեակցիայից ստացվող  
նյութերի համաստ անունները,

բ) նրանց մոլեկուլային կշիռները.

գ) կշռային հարաբերությունները, քիմիական ռեակցիային  
մասնակից բոլոր նյութերի և առանձին ելեմենտների ատոմների  
միջև:

Դասատուն աշակերտների ուշադրությունն ե դարձնում նաև  
այն հաճամանքի վրա, վոր քիմիական հավասարումը, ինչպես  
և քիմիական ֆորմուլը, ունի քանակական արտահայտություն,  
այդ պատճառով հավասարման ռդնությամբ ևս կարելի յե մի  
շարք հաշվումներ կատարել որինակ, հաշվել

ա) ինչքան յերկաթ պետք ե վերցնել փորձեսդի 22 կշռա-  
մաս յերկաթի սուլֆիդ ստացվի,


բ) ինչքան ծծումք ե պահանջվում 176 կշռամաս յերկաթի  
սուլֆիդ ստանալու համար.

գ) ինչքան յերկաթի սուլֆիդ կստացվի 28 կշռամաս յեր-  
կաթից.


դ) ինչքան յերկաթի սուլֆիդ կստացվի 128 կշռամաս  
ծծումքից:

Նման խնդիրների լուծման ընթացքը միանգամայն բավա-  
կան ե ցույց տալ դասարանում միայն յերկու-յերեք որինակնե-  
րի վրա: Պետք ե բացատրել վոր որինակ, առաջին խնդիրը լու-  
ծելու համար անհրաժեշտ ե

ա) միշտ գրել ռեակցիայի հավասարումը՝ ցույց տալով նրա  
քանակական նշանակությունը:




բ) Կազմել համեմատություն և կատարել համապատասխան  
հաշվումները:




Մնացած խնդիրներն ըստ այս որինակի աշակերտները կա-  
րող են ինքնուրույն կերպով տանը լուծել:

Նույն ձեզ ել վերլուծվում ե ցինկի սուլֆիդ ստանալու  
ռեակցիայի հավասարումը.



Դրանից հետո աշակերտներն իրենք կարող են գրել իրենց  
ծանոթ ռեակցիաների հավասարումները.

ա) միացման ռեակցիայի՝ ածուխի այրումը.




ծծմբի այրումը.



բ) քայլայման ռեակցիայի չհանգած կիր ստանալը.



գ) տեղակալման ռեակցիայի՝ յերկաթի ներդործությունը  
պղնձի արջասապի վրա՝



Հաված հավասարումներից յուրաքանչյուրը կազմելուց առաջ

աշտկերտները, դպրատուի ոգնությամբ, հիշում են բուն քիմիական պրցեսի եյությունը և ռեակցիային մասնակցելով նյութերը:

Մի քանի ավելի բարդ նյութերի փորմուլները կարող ե տալ դպրատուն ինքը:

Այդ նույն տեղում ել աշակերտները ծանոթանում են, թէ ինչպես կազմել գործակիցներով հավասարութները:

Դպրատուն ցույց ե տալիս աշակերտներին այդ նախ գրաւախտակի վրա, վերցնում ե վորեւ հասարակ որինակ ասենք ջրի ստացման հավասարութը ջրածնի այրմամբ, և բացատրում ե այն մոռավորապես հետեւյալ ձևով:

Այրվելիս ջրածնը միանում ե թթվածնին. ստացվում ե ջուր: Դա կարելի յէ այսպես գրել՝  $H_2 + O_2 = H_2O$ :

( $H_2$ —ջրածնի մոլեկուլն ե,  $O_2$ —թթվածնինը,  $H_2O$ —ջրինը):

Մենք գրեցինք նյութերի մոլեկուլները և միացրինք նրանց համապատասխան նշաններով: Բայց դա դեռ ուստիցիալի հավասարութը չե: Քիմիական ռեակցիաների յուրաքանչյուր հավասարում հիմնվում ե նյութերի կշիռների պահպանման որենքի վրա. ռեակցիայի մեջ մտնող և ռեակցիայից ստացվող նյութերի քանակներն իրար հավասար պետք ե լինեն: Ատոմա-մոլեկուլային ուսմունքի տեսակետից դա նշանակում ե, վոր հավասարման աջ ու ձախ կողմերի ատոմների թվերն իրար հավասար պետք ե լինեն: Մինչդեռ մեր հավասարման ձախ մասում ջրածնի ու թթվածնի յերկուական ատոմներ կան, իսկ աջ մասում—թթվածնից միայն մեկ ատոմ կա:


Մեր հավասարութը շտկելու համար թթվածնի ատոմների թիվը հավասարման աջ ու ձախ մասերում պետք ե հավասարեցնել:

Չախ մասում յերկու ատոմ թթվածնն կա: Այնպես անենք, վոր աջ մասումն ել նրանց թիվը յերկուս գտննա: Յերկու թվանշանը թթվածնի ատոմի կողքին գրել չի կարելի, վորովհետև այդպիսով ջրի մոլեկուլի բաղադրությունը կփոխվի. կոտացվեր վոչ թե ջուր ( $H_2O$ ), այլ ջրածնի պերոքսիդ ( $H_2O_2$ ): Այդպիսի բաներ հավասարութների մեջ յերեք չի կարելի անել: Զե՞ վոր մենք գիտենք՝ ռեակցիայից ստացվում ե ջուր: Գիտենք նաև, վոր այդ ռեակցիային մասնակցել են յերկու ատոմ թթվածնն ( $O_2$ ): Թթվածնի այդ յերկու ատոմներն ել մտել են ջրի մոլեկուլի կազմի մեջ: Այդ կարող ե լինել միայն այն դեպքում, յեթե ջուր ստացվել ե վոչ թե մեկ, այլ յերկու մոլեկուլ: Հենց այդպիս ել

ստացվում ե  $H_2 + O_2 = 2H_2O$  (չըի մոլեկուլների թիվը արտահայտվում ե յերկու գործակցով):

Այդ գործակիցը (2) վերաբերում է ջրի ամբողջ մոլեկուլին: Ստուգում ենք: Թթվածնի ատոմների թիվը այժմ հավասարման թե աջ և թե ձախ մասերում նույնն ե (2-ական): Բայց հիմա ել ջրածնի ատոմների թիվը անհավասար դարձավ. աջ մասում—4 ատոմ, իսկ ձախ մասում—միայն յերկուս:








Ակնհայտ ե, վոր ռեակցիային մասնակցել են վոչ թե 2, այլ 4 ատոմ, այսինքն յերկու մոլեկուլ ջրածնին  $2H_2$ , ուրիշ կերպ՝ յերկու մոլեկուլ ջուր չեր կարող ստացվել: Ուրեմն,



Ստուգում ենք ատոմների թիվը հավասարման ձախ և աջ մասերում: Պարզվում ե, վոր մեր հավասարութն այժմ ձիշտ և կազմված:

Այդպիսով, հավասարութը ձիշտ կազմելու համար պետք է ողտվել գործակիցներով—նյութերի փորմուլներից առաջ զրվող թվանշաններով: Գործակիցները վերաբերում են ամբողջ մոլեկուլին և ցույց են տալիս նրարի մոլեկուլների թիվը, ի տարբերություն ատոմների կողքին զրվող փոքրիկ թվանշաններից, վորոնք վերաբերում են միայն այն ատոմներին, վորոնց կողքը նրանք գրված են:

Հստ այդ որինակի աշակերտները, դպրատուի զեկավարությամբ, վարժվում են գործակիցների տեղադրման գործում հետեւյալ թերի հավասարութների մեջ:



Աշտկերտների կազմած հավասարութներն ողտագործվում են զանազան թվական հաշվումներ կատարելու համար, ինչպես որինակ,  $2H_2 + O_2 = 2H_2O$  հավասարման հիման վրա, կարելի յէ առաջարկել հետեւյալ ինդիքները.

ա) Գորշել այս հավասարման մեջ մտնող նյութերի կշռացին հարաբերությունները:

բ) Խնչքան ջրածին ու թթվածին և ընկնում ջրի յուրաքանչյուր 2 մոլեկուլին:

գ) Ինչքան ջրածին պետք և վերցնել 72 դրամ ջուր ստանալու համար:

Դ) ԽԱՀՔԹԻՆ ՂՈՎՐ ԿԱՌԱԳՎԻՒ 16 գրամ ջրածինն այրելուց:

ե) Խնչքմն թթվածին կողահանջվի Զ գրամ ջուր ստանալու համար:

Անալոգ շատ խնդիրներ ունեցիչն ինքը կարող է հորինել:  
Այդ խնդիրներից մի քանիսը լուծվում են դասարանում: Խոկնը անց  
մի մասն եկ տրվում և տանը լուծելու համար:

Վերջապես, աշակերտների՝ հավասարութմանը կազմելու և  
նրանց հիման վրա հաշվութմանը կատարելու կարողությունն ամ-  
բապնդելու և կրկնության համար, կաթելի յե ոգագործել աշա-  
կերտնելին ծանոթ բոլոր սեակցիաները, որինական) պղնձի ոք-  
սիդի գոյացումը՝ պղնձը թթվածնի միջավայրում տաքացնելիս,  
ը) ծճմբի այրումը թթվածնում, դ) մազնեղիումի այրումը թթված-  
նում, վերից գոյանում և մազնեղիումի ոքսիդ ՄցՕ, դ) ջրի ու  
պղնձի առաջացումը՝ տաքացրած պղնձի ոքսիդի վրայով ջրածին  
անցկացնելիս, և այն:

Թեմայի աշխատանքների համար անհրաժեշտ ե ուսնենալ ելեմենտների լատինական ու ռուսական (կամ տեղական) անունների, նրանց քիմիական սիմբոլների ու ատոմական կշիռների պատի աղյուսակ: Այդպիսի աղյուսակներ հրատարակվում են Սպառագիտական հայրածառական պետական պետական պատրաստիկ ակադեմիայի կողմէց, բայց ծայրահեղ գեղագում նրանք կարող են պատրաստվել նաև գործոցի ուժերով:

ՔԱՄԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂԻԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՐԿՆՈՂՅՅԻ ԴՐԱ ՈՒ ԱՄՐԴՊՐԴՈՒՄԸ՝ «ՇՇՈՒՄԲ», «ԱԶՈՏ  
ՅԵՎ ՖԼԱՖՈՐ» ԹԵՐԱՆԵՐԻ ՈՒՍՈՒԽՆԱՍԱԻՐԻ ԻԹՅԱՆ  
ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱԾ

I. ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Դպրոցների ուսումնական աշխատանքների արդյունքը ցույց  
ե տալիս, վոր քիմիայի դասավանդումը, մանավանդ գերջին տա-  
րիներում, անկասկած լավացել ե: Դասառուները, իրենց վորակը

սիւտեմատիկաբար բարձրացնելով, ավելի լջարեն են պատրաստվում դասերին: Քիմիայի դասերը դարձել են ավելի բովանդակալից ու կենդանի: Աշակերտներն ավելի շատ են սկսել հետաքրքրվել քիմիայով: Աշակերտների գիտելիքների վորակը քիմիայից զգալի բարձրացել եւ:

Բայց բոլոր այդ հաջողությունները գեռ բավական չեն: Քի-  
միայի գասատուները գեռ չեն լուծել ամենահիմնական խնդիրը,  
վորը զրվել և դպրոցի առաջ մեր կուսակցության կենտրոնական  
կոմիտեյի կողմէից. «...անպայման ապահովել յուրաքանչյար զիսու-  
րյան հաստառ ու ամառ յօւրագումք և ամրապնդաւմք»: (Համ ԿԿ  
(բ) ԿԿ-ի վորոշումը «Տարբական ու միջնակարգ դպրոցների  
ծրագրերի ուժիմի մասին»):

Ինչպես ստուգումները ցույց են տալիս, մինչև այժմ գեռ  
աշակերտների զգալի մասի գիտելիքները քիմիայից բավարար  
չափով վորոշակի ու ամեւր չեն, մանավանդ քիմիայի հիմնական  
հասկացողություններին վերաբերող մասում: Իսկ զա առաջանում  
ե՝ նրանից, վոր շատ գասատուներ սահմանափակվում են հերթա-  
կան ուսումնական նյութի շարադրությամբ և միանգամայն թե-  
րագնահատում են այդ նյութի կրկնողության ու ամրապնդման  
գերը՝ աշակերտների գիտելիքների վորակի լավացման համար  
տարվող պայքարի գործում:

Ուսումնական նյութի կրկնողության ու ամրապնդման հարցին մինչև այժմ, դժբախտաբար, համարյա վոչ մի ուշադրություն չի դարձվել մեր ուսումնաւոնեթողական գրականության մեջ։ Բավական ե հիշատակել, վոր նույնիսկ պրոֆ. Ա. Վերխովսկու «Քիմիայի դասավանդման մեթոդիկան» ձեռնաբկում այս հարցը բոլորվին աչքաթող ե արված։

Մինչդեռ գասատուները, մանավանդ յերիտասարդները, այդ  
հարցում ողնության կարիք ունեն: Նբանց համար այնքան ել  
պարզ չե, թե քիմիայի կուրսից ի՞նչը և ի՞նչպես պետք է կը կնքել:  
Առանձնապես նրանց դժվարություն ե պատճառում այդ աշխա-  
տանքի մերոդիկան: Այս հոդվածի նպատակն է հենց ողնություն  
գալ գասատուն:

Ասաց մենք կանգ կառնենք մի քանի ընդհանուր, սկզբունքը եյական մոմենտների վրա և այնուհետև դրանք կքննարկենք «Ծծումբ», «Ազու և Փոսփոր» թեմաների կոնկրետ նյութերի վրա:

Նախ կը կնողության բովանդակության մասին։ Դպրոցների

պրակտիկայում կը կնօղությունն ու ամրապնդումը շատ հաճախ սահմանափակվում և միայն տվյալ թեմայի կամ նրա առանձին մասի ուսումնասիրության ըրջանակներով։ Այսպես, որինակ, «Ծծումբ» թեմայից կը կնվում և սովորաբար այն, ինչ վոր միայն ծծումբին և նրա կարեռագույն միացություններին և վերաբերում, առանց շաղկապելու այն՝ աշակերտների առաջներում ուսումնասիրած նյութերի հետ։ Տրեմեստրի քառորդի կամ սեմեստրի կիսամյակի վերջում քիմիայի կուրսի մի ամբողջ ըաժինը կը կնելիս, յուրաքանչյուր թեման ևս քննվում է ինքնուրույնուրեն և ամենուրեք, նույնիսկ նույն հաջորդականությամբ, ինչպես նա շարադրված եղասագքում։ Տվյալ թեմայի հասկացողությունները առաջներում ուսումնասիրած անալոգ զաղափարների հետ շաղկապվում են շատ հաղվագեղ և միանգամայն պատահական կերպով։ Մի խոսքով, շատ ուսուցիչներ կը կնողությունն ու ամրապնդումը հասկանում են շատ նեղ խմաստով—միայն «այստեղից այստեղ»։

Նման, զուտ ձեւական կրկնողությունը, ի հարկի, վոչ մի գեղքում չի խորացնում ու ամրացնում աշակերտների ստացած գիտելիքները, չի նպաստում քիմիական հիմնական զաղափարների աստիճանական ձեւավորման պրոցեսին՝ աշակերտների մեջ։

Միայն մի քանի դասատուներ ճիշտ կերպով են մոտենում կրկնողությանը։ Քիմիայի զարգնթացի գեռսկզբում նրանք պարզում են իրենց համար, թե հիմնական վրա գաղափարները և ինչպիսի խորությամբ պետք ե աշակերտները յուրացնեն իրենց ուսման ամեն մի տարրում։ Այդ հարցում նրանց ոգնում է ծրագրին կցած բացատրականը, վորը բացի հիմնական զաղափարների ցանկը տալուց, անում ե նաև մի կարևոր ընդհանուր ցուցմունք, թի «Հրաժարվելով դասընթացը կոնցենտրիկ ձևով կառուցելուց, ծրագրիը, սակայն, ժամանակ առ ժամանակ վերադառնում ե առաջներում տնօցած հիմնական զաղափարներին ավելի բարձր մակարդակի հասցնելով՝ այն և ցույց տալով նոր կօղմերն ու կապերը։

(Քիմիայի, 1937 թ., ծրագիր, եջ 36—ընդգծումներն իմն են ի., Բ.)։

Այս, ամենից փորձառու և մտածող դասատուներն ընդունում են, վոր յուրաքանչյուր քիմիական հասկացողության ձեւավորումը—դա մի պրոցես է, բաղկացած մի շարք հաջորդական աստիճաններից, վորոնք որդանապես շաղկապված են իրար հետ, և

վեր ավագ հասկացողության սահմանում ամեն մի հետեւյալ ավելի բարձր աստիճանին անցնելը հնարավոր և միմիայն իմտցականության նախորդ աստիճանի ամուր բազայի վրա։

Ակնհայտ է, թե այդ գասատուներն ինչպիսի վերաբերմունք ունեն գեղքի կրկնողությունն ու ամրացումը։ Նրանք չեն վերածում կրկնողությունն անցած նյութի փորմալ վերանայման։ Կը կնելիս նրանք սերտ կապ են հաստատում նախորդում ուսումնասիրած նյութի հետ, ձգտում են անցած հիմնական հասկացողությունները հասցնել ավելի բարձր մակարդակի, ցաւց տալով երանց նոր կօղմերն ու կապերը։ Այդ գասատուները գտնում են, վոր նոր նյութի ուսումնասիրությունը և հնի կրկնությունը, դա քիմիայի հիմունքների իրապես ամուր, հաստատ յուրացման ու ամրացման միասնական պրոցես է։ Այդ ուսուցիչների մոտ նոր նյութի ուսումնասիրությունը հանդիսանում է միաժամանակ և հնի կը կնողությունը։

Այդ ուսուցիչների վերհիշված գրույթների ճշտությունը լիովին հաստատվում և նրանց աշխատանքի իրոք որինակելի գըրվածքը։

Կոնկրետ ինչպիսի պատկերացնել անցած նյութի կրկնողության ու ամրացման կազմակերպումը։

Պարզենք այդ «Ծծումբ», «Աղոտ և ֆոսֆոր» թեմաների ուսումնասիրության որինակի վրա։

## II. ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ծծումբ» և «Աղոտ ու ֆոսֆոր» թեմաների անալիզի հիման վրա, անցած նյութը կրկնելու ու ամրացնելու բովանդակության մեջ կարելի յե առանձնացնել հետեւյալ բաժինները։

1-ին ԲԱԺԻՆ. ՔԻՄԻԱԿԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ  
ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ

Այս բաժնում պետք է.

ա) ծծմբի ու ֆոսֆորի ալլոտրոպիկ ձեւափոխությունների կապակցությամբ ընդարձակել աշակերտների պատկերացումն արտորոպիայի մասին ու այդպիսով ձշտել «Քիմիական ելեմենտ» հասկացողությունը։

բ) աղոտի խմբին վերաբերող կոնկրետ մասերի ավելի հիման

վրա աժելի ցայտուն կերպով նշել, վազ մետաղների ու մետաղիդների միջև կտրուկ սահման չկա:

գ) ծծմբի, ազոտի և ուրիշ նման քիմիական ելեմենտների հատկություններն ուսումնասիրելիս համեմատել նրանց հալոգենների հետ. հատուկ ուշադրություն դարձնել դեռ հալոգենների ուսումնասիրության ժամանակ հայտարերած այն հիմնական պյույթի վրա, վոր ելեմենտների քիմիական հատկությունները կախում ունեն նրանց ատոմական կշիռներից, ինչպես նաև ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր ծծմբի խմբի և մանավանդ ազոտի խմբի ելեմենտների մետալիգական հատկությունները թուլանում են՝ համեմատած հալոգենների խմբի հետ. ավելի մոտից ծանոթացնել աշակերտներին ելեմենտների բնական կլոսիֆիկացիայի հետ:

5-րդ ԲԱԺԻՆ: ՆՅՈՒԹԵՐԻ ՄՈԼԵԿՈՒԼՅԱՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Պոլիմորֆիզմի կապակցությամբ—ընդարձակել աշակերտների հասկացողությունը պարզ նյութերի մոլեկուլյար բաղադրության, մասին:

բ) Ծծմբական անհիդրիդի ու ազոտի դիոքսիդի պոլիմերիան ուսումնասիրելիս—հիշել ու բացատրել Փառըջրածնի մոլեկուլային բաղադրությունը:

5-րդ ԲԱԺԻՆ: ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵՍԿՈՒԼ

Ծծմբական թթվի ստացման արդյունաբերական յեղանակներն ու ամոնիակի սինթեզը, ինչպես նաև ազոտի քիմիական հատկությունները քննարկելիս,

ա) հիշել, աշակերտներին արդեն ծանոթ, եկզուկ ենդոտերմ սեակցիաները,

բ) ընդարձակել աշակերտների դիտելիքները քիմիական սեակցիայի արտգության վրա ազդող պայմանների մասին,

գ) կապել սեակցիաների դարձելիությունը հերդուել կանոնի հետ:

4-րդ ԲԱԺԻՆ: «ԼՈՒՇՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծծմբական թթվի ու ամոնիակի հատկություններն ուսումնասիրելիս,

ա) մի անգամ ևս կանգ առնել Փլորի վերաբերմունքի վագեպի ջուրը և ընդարձակել «լուծում» հասկացողությունը.

բ) հիշել ու ամրացնել «լուծույթի կոնցենտրացիա» հասկացողությունը:

5-րդ ԲԱԺԻՆ: «ՈԲՍԻԴ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծծմբի, ազոտի ու փոսփորի ոքսիդների որինակի վրա ամրացնել թթվային ոքսիդների կլասիֆիկացիան, հատուկ ուշադրություն դարձնելով աղածին և վոչ աղածին ոքսիդների, ինչպես նաև այսպիս կոչված «խառը անհիդրիդների» գոյության վրա:

6-րդ ԲԱԺԻՆ: «ԹԹՈՒ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծծմբական, ծծմբաջրածնական, ազոտական ու որթոֆոսֆարական թթուներն ուսումնասիրելիս ամրացնել աշակերտների ղետելիքները.

ա) թթուներ ստանալու ընդհանուր յեղանակների մասին.

բ) թթուների կլասիֆիկացիայի մասին.

գ) կարեռագույն թթուների բնորոշ հատկությունների մասին:

7-րդ ԲԱԺԻՆ: «ԱԼԿԱԼԻ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ամոնիումի հիդրօքսիդի կապակցությամբ, աշակերտներին ծանոթ կոնկրետ որինակների վրա, ավելի հատակ սահմանագծել «հիմք» և «ալկալի» հասկացողությունները:

8-րդ ԲԱԺԻՆ: «Ա.Դ» ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծծմբական, ծծմբաջրածնական, ազոտական ու փոսփորական թթուների աղերն ուսումնասիրելիս նորից վերաբանալ աղերի կլասիֆիկացիային ու տերմինուոգիային, նաև ծանոթացնել աշակերտներին կարեռագույն աղերի բնորոշ հատկություններին:

9-րդ ԲԱԺԻՆ: ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

«Ծծումբ» և «Ազոտ ու փոսփոր» թեմաների կոնկրետ նյոււթերի վրա ամրացնել աշակերտների պատկերացումը քիմիական

Թայությունների հիմնական գասերի ու նրանց միջև յեղած փառաբարձ կապի մասին:

Այս ե՞ «Ծծումբ» և «Ազոտ ու Փոսֆոր» թեմաների ուսումնասիրության կապակցությամբ նյութի կրկնողության ու ամրացման բովանդակությունը:

Մետաղական բնորոշ փայլը ցուցադրելու համար ցանկալի յե նատրիումն ու կալիումն ունենալ փակ խողովակների մեջ (պատրաստման ձևը տես Ա. Կ. Լեպինի «Նեօրգանիկ քիմիա» մեջ 82)։ Մետաղը կարելի յե նաև հալեցնել թեզ՝ 1932 թ. եջ 82)։ Մետաղը կարելի յե նաև հալեցնել կամ քսիլոլի տակ—հալված մետաղն անջատվում է իր տոլուոլի կամ քսիլոլի տակ—հալված մետաղն կաթիլների ձևով։ Այդ նպատակի հաջապած կեղեցի փայլուն կաթիլների ձևով։ Այդ նպատակի հաջապած կեղեցի փայլուն կաթիլների ձևով։ Թորվածքի առաջն պղտոր լուլը (կամ քսիլոլը) պետք է ջրից ազատ մար գործածվող տոլուոլը (կամ քսիլոլը) պետք է տաքացնել վորը կարելի յե իրագործել վաճառվող տոլուոլը (կամ քսիլոլի, վորը կարելի յե թորվելու միջոցով։ Թորվածքի առաջն պղտոր լուլը) պարզ կերպով թորվելու միջոցով։ Թորվածքի առաջն պղտոր լուլը, վորոնք ջուր են պարունակում, պետք է զեն զցել։ Կաթիլները, վորոնք ջուր են պարունակում, կոր հատակ կոլբայով, վորի խցանվելի լավ և թորումը կատարել կոր հատակ կոլբայովի գոլրշիները խտացնի վրա կամ յերկար խողովակի տոլուոլի համար պետք է տաքացնել ներու համար։ Հրդեհից խողովակի համար պետք է տաքացնել ներու համար։ Հրդեհից խողովակի համար պետք է տաքացնել ներու համար։ Հրդեհից խողովակի միջոցով, ավելի լավ ելեկտրական պղտացի ավազի բաղանիքի միջոցով, ավելի լավ ելեկտրական պղտացի ավազի բաղանիքի միջոցով, այսի աշուշացնելու մեջ ուղղությամբ։ Բացի այդ, անհրաժեշտ ե ձեռքի տակ ունենալ մի ոգնությամբ։ Ցանկալի յե զուգընթաց փորձեր դնել թե նատակավայրը ավազ։ Ցանկալի յե զուգընթաց փորձեր դնել թե նկատել պիումի և թե կալիումի հետ, այդ ժամանակ կարելի յե նկատել,

վոր (մոտավորապես հավասարամեծ կտորներ վերցնելիս) կավուշմբն սկսում ե ավելի շուրջ հալվելը քան նատրիումը: Դաստիուն հաղորդում ե տոլուովի յեռման տեմպերատուրը (110 աստիճան): Նատրիումն ու կալիումը դյուրահալ մետաղներ են (97,5 աստիճան և 62 աստիճան):

Ի վերջո ցուցադրվում ե նատրիումի ելեկտրոնազորդականությունը (իսկ յեթե ժամանակը ների, նաև կալիումինը): Նավթի մեջ գտնվող մետաղի կտորին կցում են լարերի մերկ ծայրերը: Շղթայի մեջ մտցվում ե ելեկտրական լամպը:

Լրացուցիչ հաղորդվում ե նատրիումի և կալիումի տեսակարար կշիռների մասին: Դաստիուն ընդգծում ե, վոր հայտարարած ֆիզիկական հատկությունները բնորոշ են բոլոր ալկալի մետաղների համար: Ալկալի մետաղների ֆիզիկական հատկություններն ամփոփված են աղյուսակում:

Մետաղ	$S_{\text{E}}$	Հալման տեմպերատ.	Ցեռման տեմպերատ.	Կարծրություն	Տեսակարար ելեկտրոնա- զորդականու- թյուն (անդի- կինը = 1)
Li . . . . .	0,53	179°	1009°	0,6	11
Na . . . . .	0,97	97,5°	877,5°	0,4	22
K . . . . .	0,86	62°	760°	0,5	15
Rb . . . . .	1,52	39°	690°	0,3	8
Cs . . . . .	1,87	28,5°	670°	0,2	5

Հետաքրքիր և այս աղյուսակը համեմատել իր ժամանակին հալոգենների համար կականած աղյուսակի հետ:

Հալոգեններ	$S_{\text{E}} \cdot \text{կ}^{\circ}$	Հալման տեմպերատ.	Ցեռման տեմպերատ.
F <sub>2</sub> . . . . .	1,108	-223°	-187°
Cl <sub>2</sub> . . . . .	1,56	-101°	-34°
Br <sub>2</sub> . . . . .	3,14	7,3°	+ 59°
I <sub>2</sub> . . . . .	4,94	+ 113,5	+ 184°

Ցերկու դեպքում ել պարզ նյութերի ֆիզիկական հատկությունները փոփոխվում են կարգավելի փոփոխության հետ միասին: Ստկայն փոփոխության ընթացքը յերկու դեպքում միշտ ել իրար չեն համընկում, որինակ, հալման ու ցեռման տեմպեր-

բատուրը հալոգենների գեպքում կարգաթվի աձման հետ բարձրանում է, իսկ ալկալի մետաղների խմբում նա, ընդհակառակը, իջնում է:


Կողմանորոշվելու համար, թե ի՞նչ չափով աշակերտներն ըմբռնեցին նրանց հաղորդած նյութը, բացի սովորական կրկնողական հարցերից, նրանց կարելի յէ առաջարկել նաև հետևյալ խընդիրը. Փիզիկական ինչպիսի հատկություններ կարելի յէ յենթագրել № 87 ելեմենտի համար ազատ վիճակում:

## 2. Ալկալի մետաղների բիմիական հատկությունները

ա) Ուժակցիան բրվածնի հետ: Նախորդ դիտումներից յերևաց, վոր ալկալի մետաղները սովորական պայմաններում արդեն ոքսիդանում են ողի թթվածնից: Ակնհայտ ե, վոր ոքսիդացման, ինչպես և ամեն մի ռեակցիայի արագությունն աճում է, յեթե տեմպերատուրան սենյակի սովորական տեմպերատուրայից ավելի բարձր և լինում: Դաստիուն ցուցադրում է, թե ինչպես գգալի մեջ տեղապորգած նատրիումը սպիրտայլոցի բացով տաքացնելիս հալվում է, ծածկվում սպիտակ գեղնավուն կեղեով և վերջապես այլպում է: Անալոգ փորձ կատարվում է կալիումի հետ: Նշվում է բոցի գույնը: Նշվում են նաև, վոր այրումն սկսվելուց հետո նա շարունակվում է արգելն առանց գրսից տաքանալու: Դացուց և ատլիս, վոր ալկալի մետաղները թթվածնի հետ ռեակցիայի մեջ քանակությամբ չերառություն և արտազատվում: Իրենցից ինչ և ներկայացնում նատրիումի և թթվածնի ռեակցիայի արդյունքը: Յեթե դա նատրիումի ոքսիդ ե՝ Na<sub>2</sub>O, ապա նա լինչպես կազդի ջրի ու թթուների վրա (աշակերտներից մեկը կանչվում է զբանահատակի մոտ ու զրում և համապատասխան ռեակցիաների հավասարությունը): Յեզրակացությունն ստուգենք փորձով: Դաստիուն մատնանշում է, վոր նա կոդագործի վոչ թե փորձի ընթացքում ստացված արդյունքից (նա շատ քիչ և ստացվել), այլ գնվածից: Նատրիումի սպերսփերի փոքր քանակությունն տեղավորում էն լայն փորձանոթի մեջ և նրա վրա կաթիլ առ կաթիլ ջուր են ավելացնում: Նկատվում է գազի անջատում, վորն ստուգում են առկայծող մարխի ոգնությամբ: Նույնպիսի փորձ կատարում են և ոսոր աղաթթվավ:

Այդպիսով, նատրիումը թթվածնի մեջ այրվելիս նատրիումի ոքսիդ չի գոյանում: Նատրիումի ոքսիդի վրա ջուր աղգելիս թթվ-

վածինը չպետք է անջատվի: Նատրիումի այրվելուց գոյանում և նատրիումի պերոքսիդ՝  $\text{Na}_2\text{O}_2$ : Ըստհանրապես պերոքսիդներ կոչվում են ջրածնի պերոքսիդների  $\text{H}_2\text{O}_2$  աղերը: Ջրածնի պերոքսիդը թույլ թթույթ, շատ հեշտ քայլայվում եւ տալով ջուր և թթվածին: Նատրիումի պերոքսիդի ռեակցիան ջրի հետ ( $\text{H}_2\text{O}_2 + \text{Na}_2\text{O}_2 \rightarrow \text{NaOH} + \text{H}_2\text{O}_2$ ) և աղաթի հետ կարելի յեւ հետեւյալ հավասարումներով արտահայտել:



Եզրում եւ, զոր կալիումն այրելուց ստացվում է կալիումի պերոքսիդ:

բ) Ռեակցիան ուրիշ փաշ-մետապների հետ: Դեմոնստրացիայի համար կարող են դրվել փորձեր ծծմբի և քլորի հետ: Նատրիումի փոքր կտորը, չորացնելով ֆիլտրի թղթով, տրորում են ծծմբի փոշու հետ միասին սանդում: Տեղի յեւ ունենում թեթև պայթյուն: Փորձը կրկնում են մի քանի անգամ: Ցույց են տալիս ռեակցիայի արդյունքը:

Ավելի ևս յեռանդուն և ընթանում ծծմբի ռեակցիան կախվում է ևս յեռանդուն և կատարել կալիումի՝ խնամքով չորացրած շատ փոքր կտորների հետ: Խորհուրդ եւ տրվում ձեռքը փաթաթել սրբիչով, իսկ աչքերը պաշտպանել ակնոցներով: Փորձը պետք է դնել աշակերտների սեղաններից մեծ հեռավորության վրա և ապակու միջապատ դնելով փորձի դիմացը, վորովհետեւ կալիումի կամ կալիումի սուլֆիդի շիկացած կտորները կարող են սանդից դուրս թռչել և պատահմամբ ընկնել աշակերտների աչքերի մեջ:


Անեակցիան քրորի հետ ցուցադրելու համար, ոգտվում են և չնկարում ցույց տված սարքեց:

Քրոր ստանալու համար ծառայում է կաթեցնող ձագար ու նեցող Ա կոլբան (կոլբայում գտնվում են մանրացրած կալիումի պերմանգանատը, իսկ ձագարում՝ կոնցենտրած աղաթթու): Բառակի մեջ լցրած նատրիումի հիդրօքսիդի կամ հիպոսուլֆիտի լուծծույթը ծառայում է սեակցիայի մեջ չմոռած քրորը կանելու համար: Ամբողջ սարքեց ժամանակավորապես անջատում են քրոր կալիումի խողովակը, նրա մեջ տեղափորում են ֆիլտրի թղթով լավ չորացրած նատրիումի մի կտոր: Քրորկացիումի խողովակը վերստին սարքին միացնելով, տաքացնում են խողովակի այն մասը (նախապես ամբողջ խողովակը տաքացնելուց հետո), զոր-

ակ գտնվում է նատրիումը: Նատրիումը հալվելուց հետո սարքը գործի յեն գցում քրոր ստանալու համար՝ չդադարեցնելով նատրիումի տաքացումը: Յերբ նատրիումն սկսում է այրվել սպիրտով յրոցը հեռացնում են:

Նման փորձ կարելի յեւ է կալիումի վրա կատարել:

գ) Ուսիդացում հասկացարկարյան ընդարձակաւմը: Նատրիումի ու կալիումի ռեակցիան վոչ մետաղների հետ յելակետ և ծառայում ոքսիդացման—ռեդուկցիման (վերականգնման) ռեակցիաների



Նկ. 1

ավելի խորը քննարկման համար: Սկզբում մենք առանձնացնում ենք այդ պրոցեսի միայն մի կողմը՝ ոքսիդացումը: Զրույցը կարելի յեւ կազմակերպել մոտավորապես հետեւյալ պլանով: Նատրիումի (կամ կալիումի) և քրորի միանալու ժամանակ տեղի ունեցող արտաքին յերկույթները շատ նման են այն յերկույթներին, վորոնք տեղի յեն ունենում նատրիումի կամ կալիումի թրթվածնի հետ միանալու ժամանակ: Մենք դա նշում ենք, ասերով թե նատրիումն այրվում է քրորում», «նատրիումն այրվում է թթվածնում»: Այդ արտաքին նմանությունն ստիպում է մեզ յենթադրելու, փոքր նաև ներքին պրոցեսների՝ ատոմների և մոլեկուլների հետ կատարվող պրոցեսները այս յերկու դեպքում պետք է նման լինեն:

Իրոք, եկեղեցական թեորիայի տեսակետից քննարկենք այն փոփոխությունները, վորոնք կատարվում են, յերբ նատրիու-

մի ու թթվածնի ատոմները մի կողմից; և նատրիումի ու քլորի ատոմները մյուս կողմից փոխազգեցության մեջ են մտնում իրար հետ։ Քրատախտակի վրա նկարում ենք համապատասխան սխեմաները, վերլուծում ենք դրանք և գալիս այն յեզրակացության, վոր մենք գործ ունենք, ըստ եյտթյան, նման պրոցեսների հետ, այսինքն ելեքտրոնի փոխանցումը նատրիումի ատոմից մի գեղաքում քլորի ատոմին, մյուս դեպքում թթվածնի ատոմին։ Նույնպիսի պրոցեսներ են կատարվում, յերբ կալիումն և միանում թթվածնի կամ քլորի հետ։

Յերբ նատրիումն ու կալիումը միանում են թթվածնին, մենք ասում ենք, վոր նրանք ոքսիդանում են։ Բայց նատրիումը կամ կալիումը քլորին միանալիս նրանց ատոմների հետ նույն փոփոխություններն են կատարվում, ինչ վոր թթվածնի հետ միանալիս։ Դա առիթ հանգիստացավ այնպիսի պրոցեսները, ինչպես նատրիումի միացումը քլորին, կամ կալիումի միացումը քլորին անվանել նույնպես նատրիումի կամ կալիումի օքսիդացման պրոցես։

Այսպես, մենք ասում ենք, «նատրիումն ոքսիդանում և քլորում», թեև այս պրոցեսում թթվածինը բոլորովին չի մահնակշում։

Նույնպիսի պրոցեսներ տեղի յեն ունենում, յերբ նատրիումը կամ կալիումը միանում և ծծմբի հետ (այդ պրոցեսները վերլուծվում են նույնպես ելեքտրոնական թեորիայի տեսակետից)։ Եյս գեղքում ես կարելի յետ ասել, վոր նատրիումը կամ կալիումն ոքսիդանում են ծծմբով։ Ընդհանրապես պայմանավորվել են բոլոր այն պրոցեսները, վորոնց ընթացքում ատոմները տալիս են ելեքտրոններ, անվանել օքսիդացման պրոցեսներ։

Ալկալի մետաղները հեշտությամբ ոքսիդանում են, ուրիշ խոսքով ալկալի մետաղների ատոմներից հեշտությամբ անջատվում են ելեքտրոնները։

Ալկալի մետաղների ատոմներն այս հատկությունն արտահայտում են վոչ միայն պարզ, այլև բարդ նյութերի հետ ունակցելիս։

Դ) Նատրիումի ու կալիումի ունակցիան ջրի հետ։ Ալկալի մետաղները վարպետ ունակցիներ (վերականգնագիտներ)։ Զրով լցված յերկու բաժակ ծածկում են ձագարներով, վորոնց «պոչերին» հագցրած են փորձանոթներ (նկ. 2)։ Բաժակներից մեկի վրայից ձագարը հեռացնելով, զցում են բաժակի միջի ջրի մակերեսութիւն

ըրա մի կտոր նավթից մաքրած նատրիում և փորձանոթով ձագաչը ունորից դնում բաժակի բերանին։ Յերբ ունակցիան կդադարի, փորձանոթը զանգաղ հանում են առանց այն վշելու և մոտեցնում սպիրտայրոցի բոցին։ Տեղի յեւ ունենում թեթիւ պայթյուն։

Նման փորձ կատարում են կալիումի հետ։ (Կալիումի գեղաքում ջրածնի հայտարարումը սովորաբար չի հաջողվում)։ Մեակցիաները վերլուծվում են ելեքտրոնական թեորիայի տեսակետից։

Այս ունակցիաներում նատրիումի և կալիումի ատոմները կորցնում են ելեքտրոններ, իսկ ջրածնի իոնները, ընդհակառակը, ստանում են։ Յեթե ելեքտրոնի կորուսաը մենք անվանեցինք ոքսիդացում, ապա ելեքտրոնի ստացումը պետք եր անվանել ուղղուցիս (վերականգնում)։ Նատրիումն ոքսիդացավ, իսկ ջրածնը սեղուկցվեց։

Է) Մեակցիան պղինձ-օքսիմի հետ։ Փորձանոթի մեջ քառակությամբ (փորձանոթի մոտ  $\frac{1}{8}$ -ի չափ) պղնձի ոքսիդի փոշուն խառնում են փիլարի թղթով չորացրած նատրիումի 1—2 կտոր։ Փորձանոթը շտափիվ ողնությամբ ամրացնում են ավազով լցված ափսեյից վերև և տաքացնում մինչև ունակցիայի սկսվելը, վորից հետո այրոցը հեռացնում են։ Տեղի յեւ ունենում ուժեղ փորձանոթի հատակը ձեղքվում է։ Փորձանոթի պատերին հեշտ և գտնել պղնձի կարմիր հատիկները։

Մեակցիան վերլուծվում է ելեքտրոնական թեորիայի տեսակետից։


Այս գեղքում նատրիումի ոքսիդացումն ուղեկցվեց պղնձի ուղղուցումով։

Պարզ է, վոր ոքսիդացումը պետք և միշտ կապված լինի ուղղուցիսայի (վերականգնաման) հետ։ Ելեքտրոնների կորուսաը մի ատոմների կամ իոնների կողմից կապված և մյոււների ստացման հետ։

Ոքսիդացիան ու ուղղուցիան միևնույն պրոցեսի յերկու կողմերն են։ Այն նյութը, վորը հեշտությամբ ոքսիդանում է, այլ ուղղուցիսէ և նատրիումն ու կալիումը յեռանգուն ուղղուցիչներ են։

Այս յեղակացություններն ամրացնելու համար կայուն զառագործից լուծում են 39, 40 և 41 խնդիրները (եջ 72)։ Առաջ լուծծում են 40, և ապա 39 ու 41 խնդիրները։ Բոլոր գեղքերում պետք և աչել, թե ունակցիայի ընթացքում վոր ելեմնատն և ոքսիդացմանը և վորը վերականգնուցում։

Առանձնապես կանգ պետք է առնել 39 խնդրի վերլուծման վրա (նատրիումը—ծծմբի, նատրիումը—քլորի, կալիումը—քլորի ու բրոմի հետ): Այստեղ պետք է ընդգծել, վոր մետալուիդների վերաբերմամբ «ոքսիդանում ե», «ոեղուկցվում ե» հասկացողությունները չեն համապատասխանում սովորական պատկերացումներին: Այսպես, քլորը սեղուկցվում է (վերակադնվում է), յերբ ազատ վի-








Նկ. 2

հակից դառնում և մետաղի հետ միացություն, վորովհետև այս պրոցեսի դեպքում քլորի ատոմներն ստանում են ելեքտրոններ:

Հաղորդած տեղեկություններն ամրացնելու համար ոգտակար և հետեւյալ որինակները վերլուծեն.

1) Ստորև նշած պլոցեններից փորը կարելի յե դասել ոքսիդացման—սեղուկցման պլոցենների շարքին: Յուրաքանչյուր գեղքում ցույց տալ ոքսիդացնողն ու սեղուկցիչը.



2) Ինչու նատրիումի ու կալիումի գոլորշիներն ուսումն են ապակին (ցույց տալ քլորկալցիումի խողովակները, վորոնց մեջ կատարվում եր նատրիումի այցումը քլորում):

3) Վոր ելեմնետն ազատ վիճակում կլինի

ա) ամենից յեռանդուն սեղուկցիչը,

բ) ամենից յեռանդուն ոքսիդիչը:

Ալկալի մետաղների սեղուկցիչ հատկությունները ցույց տալու համար լրացուցիչ կերպով կարելի յե դնել կալիումի այրման փորձը ածխաթթվի միջավայրում: Փորձը կատարում են քլորկալցիում խողովակում, վորի մեջ դնում են կալիումի շատ փոքր կոտոր: Կալիումը սպիրտացրոցի ոգնությամբ հալում են և ապա խողովակի միջով բաց են թողնում ածխաթթու գազ կիպարի ապարատից կամ մի ուրիշ գործիքից, վորը հնարավորություն ե տաւմիս կարգավորելու գազի հոսանքը: Ռեակցիան սկսվելուն պետաքացնելը դադարեցնում են: Կալիումը շարունակում է այրվել ածխաթթու գազում, անջատելով այնքան շատ ջերմություն, վոր ապակին հալվում է (ափսեյով ավագ):

Փորձն այնքան ել անվտանգ չե, վորովհետև կարող է առաջանալ կալիումի կարբոնիլ (ԿԿՕ), վորը պայթուցիկ ե: Այդ պատճառով փորձը կատարելու սարքը պետք է հեռու լինի աշակերտների սեղաններից և ապակիով անջատված լինի նրանցից:

Ի վերջո կարելի յե ասել, վոր ալկալի մետաղների բազմապիսի կիրառումն արգյունաբերության մեջ կազ ունի նրանց սեղուկցիչ հատկությունների հետ:

3) Ալկալի մետաղների առկայությանը բնուրյան մեջ և նրանց ստացման արդյունաբերական յեղանակները

Ալկալի մետաղների հատկություններին ծանոթանալուց հետո հասկանալի յե, թե ինչու նրանք բնության մեջ ապատ վիճակում չեն գտնվում: Բերվում են առանձին ալկալի մետաղների տարածվածությունը բնորոշող թվեր, ինչպես նաև անվանում են նրանց ամենից տարածված միացությունները:

Ցույց տալու համար, թե ինչքան լայն չափով ցրված են նատրիումի միացությունները բնության մեջ, մասնավորապես, նատրիումի աղերի առկայությունը ջրում, ցուցադրվում է հետեւյալ փորձը: Փորձանոթը դրսի կողմից խնամքով լվանում են թուրած ջրով և ապա նրա վրա դրսից լցնում են ջրմուղի ջուր, իսկ

Նրա հատակը մաղնում են այլոցի անգույն բոցի մեջ (սպիրալայրոցով փորձն այնքան ել լավ չի ստացվում): Բոցն անմիջապես զեղին գունավորվում է, վոր շատ բնորոշ և նատրիումի միացությունների համար (պետք է հիշեցնել նատրիումի բոցի դույնը, ողում ու քրոռում այրվելիս):

Նատրիումի, կալիումի և այլ ալկալի մետաղների բնական միացություններում մենք գործ ունենք նրանց վոչ թե ատոմների, այլ իռնների հետ: Ալկալի մետաղ ստանալու խնդիրը կայանում է նրանում, վոր նատրիումի իռնները վերածվեն ատոմների: Ակնհայտ ե, վոր ալկալի մետաղների իռնների տենդենցը ելեքտրոններ ընդունելու, վերականգնվելով ատոմներ դառնալու նկատմամբ շատ թույլ ե արտահայտված: Իրոք, յերկար ժամանակ չեր հաջողվում տարբալուծել ալկալի մետաղների միացությունները և ազատ վիճակում ստանալ ալկալի մետաղներ: Սակայն գեռ կավուտպյեն յենթագրում եր, վոր այնպիսի նյութերը, ինչպես կծու նատրոնը, բարդ նյութեր են և նրանք պարունակում են մետաղական հատկություն ունեցող ելեմենտ: Բայց, ոսվորական քիմիական ռեակցիաներով այդ միացություններից մետաղ ստանալը յերկար ժամանակ չեր հաջողվում, և միայն անզիմական քիմիկոս և ֆիզիկոս Դեվիթին հաջողվեց ստանալ մետաղական նատրիում և կալիում, ոպտագործելով տարբալուծման համար ելեկտրական հոսանքը (1807 թ.):

Տրվում է ելեքտրոլիզի ամենապարզ բացատրությունը:

Հալված վիճակում նատրիումի ու կալիումի աղերը մասամբ տրոհվում են իոնների: Արինակ կերակրի աղը արոհվում է  $\text{Na}^+$  և  $\text{Cl}^-$  իոնների: Յեթև հալված կերակրի աղի մեջ ընկլմենք ելեկ-րոդները, վորոնք միացած են գիճնամունքենայի կամ գալվանական հզոր մաստկոցի հետ, ապա գրական լիցքավորված  $\text{Na}^+$  իոնները կսկսեն չարժվել գեղի կատողը, իսկ բացասական լիցքավորված  $\text{Cl}^-$  իոնները—գեղի անողը: Կատողի մոտ նատրիումի իոնները խլում են ելեկտրոններ և վերածվում չեղոք ատոմների: Իսկ քրոր-իոնները տալիս են իրենց ելեքտրոնները գրական լիցքավորված անողին և վերածվում են քրոր-ատոմների, վորոնք անմիջապես միա-նում են և գառնում  $\text{Cl}_2$  մոլեկուլներ:

բացատրվում ե, թե ինչու ելեկտրոլիզի միջոցով չի կարելի մետաղական նատրիում կամ կալիում ստանալ նրանց աղի ջրացին լուծույթներից։ Այնուհետև բացատրվում ե նաև, թե ինչու ժամանակակից արդյունաբերության մեջ նատրիում ստանալու հա-

մար ելեկտրոլիդի յեն յենթաքիում վոչ թե կերակրի աղբ, այլ նաև հիդրօքսիդը, փորը հալվում է շատ ավելի ցած տեսմ-պերատուրում, քան կերակրի աղբ:

#### 4. Այսայի մետադաշտի հիդրօքսիդները

Վորապես որինակներ վերցվում են կծու նատրոնը և կծու կալիոնը: Իր ժամանակին, շըրդ դասարանում, այդ նյութերն ուսումնասիրվել են փորձերով: Սակայն ոգտակար կլինի, յեթի այստեղ համապատասխան փորձերը կրկնվեն լաբորատոր յեղանակով:

Աշակերտների սեղաններին դրվում են շտամփներ 10 փորձանոթով։ Փորձանոթներից մեկի մեջ կա մի փոքրիկ կտոր կծունատրուն, մյուսի մեջ՝ կծու կտիլ։ Բացի այդ, սրանց տրվում են բամբակի ու բրդի նմուշներ, աղաթթվիկ, ծծմբական, ազոտական թթուների լուծույթներ, սպիրացրոց, լակմուսի լուծույթ, պինցետ։ Աշակերտներին առաջարկվում են դիտել կծունատրուն ու կալին (չվերցնել ձեռներով)։ Դասատուն նշում են, վոր սրանք կարծր նյութեր են սպիտակ գույնով, ողում թրծված են, վոր պայմանավորված են նրանց կողմից ողից խոնավություն խլելու հետ։ Այնուհետև փորձանոթների մեջ, կծունատրի ու կծու կամիկ վրա լցնում են ջուր (3—5 լլ<sup>3</sup>)։

Ար Վահ է  
Նշվում ե, վոր ալկալիները լավ լուծվում են ջրում և լուծվելիս տաքանում են: Ստացված լուծույթը բաժանում են յերեք մասի, մեկի մեջ գցում են բամբակի նմուշը, մյուսի մեջ—բբդի, և տաքացնում: Նկատում են ալկալիների ուստիչ հատկությունները: Յերբորդ բաժինը խիստ նոսրացնում են ջրով, բաժանում են յերեք փորձանոթների միջև, ամեն մեկին ավելացնում են լակմուս և ապա նրանց վրա կաթիւ-կաթիւ լցնում են թթու: Աշակերտներն իրենք պիտի նշեն իրենց տեսրերում դիմում յերեւոյթները, տան նրանց բացատրությունները և գրեն համապատասխան ռեակցիաների հավասարությունները:

Բամբակի ու բըդի վրա կատարած փորձերը պետք է ոգագուշագուշացնելու համար աշակելուներին, վոր կծու կազմութեալ նախազգուշացնելու համար աշակելուներին, վոր կծու կազմութեալ նախազգուշացնելու համար աշակելուներին:

կատարած փորձերի արդյունքներն ոգտագործվում են կը զ-  
նելու համար աղկալիների կարեռագույն հատկությունները, այն-  
ու դրանք ջրի մեջ լավ լուծվող նյութեր են, ջրային լուծույթնե-

գր գունավորում են լակմումը կապույտ գույնի, սևակցում են թթուների հետ, տալով աղեր:

Դասատուից աշակերտները սովորաբար լսած են լինում, վոր կծու կալին ու կծու նատրին ուժեղ հիմքեր են: Դասատուն այստեղ լրացուցիչ կերպով նշում ե, վոր կա հասարակ միջոց վորոշելու, թե գոյացնում ե արդյոք տվյալ մետաղը ուժեղ թե թույլ հիմք: Դրա համար հարկավոր ե հետազոտել, թե արդյոք հիդրո-լիքի յենթարկվում են ուժեղ և թույլ թթուների համապատասխան աղերը: Լակմուսի ոգնությամբ հետազոտվում են հետեյալ աղերի ջրային լուծույթները՝  $\text{Na}_2\text{CO}_3$ ,  $\text{K}_2\text{CO}_3$ ,  $\text{NaCl}$ ,  $\text{KNO}_3$ ,  $\text{KCl}$ :

Կալիումի ու նատրիումի հիդրօքսիդների կիրառման ու նրանց ստացման արդյունաբերական յեղանակների մասին տեղեկություններ հաղորդվում են նույն ծավալով, ինչ վոր դասագրքը քում ե:

Ոգտակար ե կանգ առնել նատրիումի հիդրօքսիդ ստանալու հին յեղանակի վրա, սողայով ազդելով կրի վրա: Կարող ե տարրինակ թփակ, թե ինչու ավելի թույլ հիմքը՝ կալցիումի հիդրօքսիդը դուրս ե մղում ավելի ուժեղ հիմքին նատրիումի հիդրօքսիդին:

Դասատուն հիշեցնում ե, վոր աղերի, թթուների և հիմքերի փոխանակման ռեակցիաների ուղղությունը կախված ե առաջին հերթին ռեակցող նյութերի վոչ թե քիմիական ակտիվությունից, վորքան նրանց հարաբերական լուծելիությունից (Բերթոլեյի կանոնը): Փոխանակման ռեակցիաները մինչև վերջ են գնում այն գեղքում, յերբ գոյացող նյութերից մեկը նատվածք ե տալիս կամ անջատվում ե վորպես զաղ: Տվյալ գեղքում գոյանում ե շատ զըժվար լուծելի կալցիումի կարբոնատը, վորի չնորհիվ գարձելի ռեակցիան նատրիումի հիդրօքսիդի հետ գործնականորեն անհնարին ե դառնում:

Զորոյցը կարելի յե ուղեկցել համապատասխան դեմոնստրացիով, այն ե՝ սողայի լուծույթին ավելացնել կրածուր, առաջանում ե պղտորություն:

Ամրացնելու համար այս բաժնի գիտելիքները և նրանք հաշվառելու նպատակով կարելի յե առաջարկել հետեյալ խնդիրները:

1. Ինչպես ստանալ նատրիումի հիդրօքսիդը, յելնելով նատրիումի սուլֆատից:

2. Յելնելով մետաղական նատրիումից, ինչպես ստանա-

- ա) նատրիումի հիդրօքսիդ.
- բ) նատրիումի կարբոնատ.
- գ) նատրիումի սուլֆատ.
- դ) նատրիումի սուլֆիտ.
- ե) նատրիումի սուլֆիդ.
- զ) նատրիումի պերոքսիդ:

### 5. Ալկալի մետաղների աղերը:

ա) Նատրիումի աղերը: Նատրիումի կարբոնատի և բիկարբոնատի ուսումնասիրությունը ավելի լավ ե սկսել նրանց հետ գործնականորեն ծանոթությունից: Դասը կարող ե ընթանալ փրոնտալ-լարորատոր աշխատանքի ձևով:

Դասատուն ցույց ե տալիս աշակերտներին, վոր նրանց սեղաններին դրված են սողայի տարրեր տեսակներ, նրանցից մեկը ոգտագործվում ե լվացքի համար, մյուսը՝ յերբեմն խառնում են խմորին, խմում են այլոցների գեղքերում և այլն:

Սողայի թե մեկ և թե մյուս տեսակները ածխացին թթվի աղերն են: Ի՞նչպես դա ապացուցել: Աշակերտները շատ շուտ գտնում են պատասխանը՝ լցնել սողայի վրա վորեն թթոււ: Կատարում են համապատասխան փորձ:

Այնուհետև դասատուն հաղորդում ե, վոր նրանցից մեկը հիդրօքսն ե, մյուսը՝ միջին աղը: Ի՞նչպես դա ստուգել: (Աշակերտների սեղաններին աղերը դրված են սրվակներով, վորոնց վրա նշանակված ե «լվացքի սողա», «բժշկական սողա»): Բազմաթիվ առաջարկություններից ընդունում են հետեյալը. լուծել ջրում և ստուգել լուծույթը ինդիկատորով (լակմուսի թղթով):

Օ Համապատասխան փորձը դնելիս նշում են, վոր «բժշկական սողան» շատ ավելի վատ ե լուծվում, քան «լվացքի սողան»: Վերջապես, վորով ապացուցում են, վոր «բժշկական սողան»— նատրիումի բիկարբոնատը տաքացնելով կարելի յե վերածել նատրիումի կարբոնատի:

Փորձն անում են այնպես, ինչպես ցույց ե տրված դասագրքում՝ բիկարբոնատի փոքր քանակությամբ, մինչեւ վոր ածխաթթու գաղը գաղարի անջատվելուց: Սառեցնելուց հետո կարծը մնացորդի վրա փորձանոթում լցնում են նոսր ածխաթթու: Ածխաթթու գաղի անջատվելը վկայում ե կարբոնատի առկայության մասին:

1) Վաճառվող բժշկական սողան յերբեմն աղքում ե ֆենոլֆտալեինի վրա, ընորհիվ նրան խառնված նատրիումի կարբոնատի: Աշակերտներին արփող նմուշները պետք ե նախապես ստուգված լինեն:

Այս փորձերով աշակերտները համոզվում են, վոր «լվացքի» սոսան»—դա նատրիումի կարբոնատն է, իսկ «բժշկական սոսան»—նատրիումի բիկարբոնատը. նատրիումի բիկարբոնատը ավելի վատ և լուծվում, քան նատրիումի կարբոնատը. նատրիումի բիկարբոնատը առաջնելիս դառնում է կարբոնատ:

Պարզելու համար, թե ինչ չափով աշակերտները յուրացընել են այս նյութը, նրանց կարելի յէ առաջարկել հետեւյալ ինդիբ-ները.

1. Նատրիումի կարբոնատի լուծույթի մեջ յերկար ժամանակ ածխաթթու գազ անցկացնելիս գոյանում է նստվածք: Ի՞նչ երենից ներկայացնում այդ նստվածքը:

2) Նատրիումի հիդրօքսիդի լուծնույթը բաժանված է յեղել յերկու միանգամայն հավասար մասերի: Մեկի մեջ անց ե կացվել ածխաթթու գազ մինչև հագենալը, և հետո սրա վրա լցվել է յերկրորդ բաժինը: Ի՞նչ նյութ է գոյացել այդ խառնուրդի՞ց:

3) Յույց տալ յերկու յեղանակ, վորոնց ողնությամբ հատքիումի բիկաբընատը կարելի յե վերածել կարբոնատի:

Մենք կանգ առանք դպրավանդման նկարագրված ընթացքի վրա այս պատճառով, վոր նա թույլ և տալիս կտպելու ուսումնական մատերիալը առողյա կյանքի յերեսույթների հետ և միաժամանակ նախապատրաստում և աշակերտներին հասկանալու Սովորյի յեղանակով սովորականացնելու պրոցեսը:

Նատրիումի բիկարբոնատի ու կարբոնատի հետ այդպիսի գործնական յեղանակով ծանոթանալուց հետո՝ աշակերտներն ավելի գիտակցորեն կմոտենան ուսուցչի բացատրությանը սոդայի նշանակության մասին արդյունաբերության մեջ։ Այդ բացատրությունները տրվում են մոտավորապես նույն ծավալով, ինչ վոր դասագրքումն է։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում սողայի արտազրության պատմությունը։ Բայց ժամանակի սղությունը հաճախ ատիպում և հրաժարվել գրանից դասի ընթացքում։

Սոլվեյի յեղանակով սոդա արտադրելու հիմքում յեղանակակիցիաները բավական պարզ շարադրված են դասագըթում, և մենք դասովանդման ընթացքում չեյինք փոխում դասագրքում՝ նդունված շարադրության կարգը:

Կարաբուգազ-գյոլի արեվակեղ ափերի նատրիումի սուլ-  
ֆատի հարուստ հանքատեղերի հայտաբերման, նըանց յուրաց-  
ման ու արդյունաբերական շահագործման պատմությունը, Վոր-  
չնարավոր դարձավ միայն Խորհրդադիմության որոք, պատ-

մությունը այն մասին, թե ինչպես բոլցիկները նվաճեցին ծովի պարզեները, ամենահարուստ նյութ է մատակարարում աշակերտների կոմունիստական գասաժարակության համար, և այդ պատճառով, զոնք համառոտ զծերով պեսք և լուսարանվի դասի ընթացքում։ Համապատասխան տեղեկությունները դասատընկարող և գտնել Պառևստավմկու «Կարաբուգազ-գոլ»—գրքույկում և վորոնց կրկնությունն այս աշխատության մեջ շատ-տեղ կդրավեր։ Մենք կնշենք միայն դասի ընթացքում լուսարանվելիք հիմնական մոմենտները, այն և հայտաբերման պատմությունը, նատրիումի սուլֆատի մեծ նատկածքներ ապաշխանալու պատճառները, շահագործումը գժվարացնող բնական պայմանները, շահագործելու խղճուկ փորձերը ցարական Ռուսաստանում, Կարարուցագի շահագործման պրոբլեմները Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո, այդ պրոբլեմի բաւծումը բոլցիկների կողմից—Կարաբուգազի քիմիական կոմինատը։

Կալիումի տղերը: Կալիումի աղերից կանգ են առնում՝ միայն պոտաշի և կալիումի քլորիդի վրա: Պատաշի արտադրության հարցը Ստասիուրտի միթոզով չափազանց բարդ է և այդ պատճառով չի կարող յուրացվել դասի ընթացքում: Քետք և հիշատակել այն դերի մասին, վոր պոտաշը, սովորյա և կրի հետ միասին, խաղացին նյութական կուրտուրայի պատմության մեջ, վորպիս առաջին և յերկար ժամանակ միակ «ալկալիները», վորոնցով մարգն ոգութում եր իր պրակտիկ գործունեյության մեջ:

Բնորոշելու համար, թե ինչ համաշխարհային նշանակություն ունեն Խորհրդային Դշտանության սրբք հայաբերած կալվումի Սովորամուկի հանքավայրերը, կարելի յէ բերել կալվումի աղերի պաշտպանութիւն հետեւյալ ավագաները (հաշված Կ<sub>2</sub>Օ-ի վրա):

Սովորամակ—16 միլիորդ տոնն

## Սասաֆուրտ-3

Ելղաս—300 մլն. տոնն

Այս հանքավայրեր 200 մէն. տոնն

Ամբողջ թեման յեզրափակելու համար աշակերտներին կարելի յէ առաջադրել հետեւյալ տիպի խնդիրներ.

1) Ոքսիզիչ, թիւ ոեզուելցիչ և Բնչպիսի-թույլ, թիւ ուժեղ հանդիսանում են.

ա) կալիումի ատոմները, բ) կալիումի իոնները:

2) Ի՞նչով բացատրել, վոր նատրիումի հիդրօքսիդի և կամումի հիդրօքսիդի լուծույթները նկատելի չափով ուսումն ևն ապակին, մանավանդ տեսական յեռացման գիպքում:

3) Ի՞նչպիսի ռեակցիա ունի նատրիումի սուլֆիդը:

4) Ի՞նչպիս ապացույցել (անալիզի և սինթեզի ճանապարհով), վոր նատրիումի հիդրօքսիդի բաղադրության մեջ մտնում ևն նատրիումը, ջրածինն ու թթվածինը:

5) Ի՞նչ աղ և գոյանում նատրիումի հիդրօքսիդի լուծույթը ձձմբաջրածնով հավեցնելիս:

6) Կարծի նատրիում հիդրօքսիդը գործ և ածվում գագեր չորացնելու համար: Ներքուժոյալ գագերից վրանք կարելի յե չորացնել նատրիումի հիդրօքսիդի ոգնությամբ՝ ծծմբաջրածին, քլորաջրածին, ամոնիակ, ածխաթթու գազ, մեթան, քլոր:

7) Ի՞նչպիսի խառնուրդներ կարող են լինել ծախու սողայի քիկարբոնատի ու կարբոնատի մեջ և ծախու կառուսարկ սողայի մեջ և ի՞նչպիս այդ խառնուրդները վորոշել:

8) Ի՞նչ տեղի կունենա, յեթե կալիումի կարբոնատի լուծույթը տաքացնենք կրաջրի հետ:

9) Քանի տոկոս նատրիումի կարբոնատ կա կրիստալական սողայում:

## ՄԱԳՆԵԶԻՈՒՄ ՅԵՎ ՀՈՂ-ԱԼԿԱԼԻ ՄԵՏԱՂՆԵՐ (4 ժամ)

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1) Տեղը սիստեմում: Ազատ մետաղների ֆիզիկական ու քիմիական հատկությունները: Հող-ալկալի մետաղները վորպես ուղղուցիչներ:

2) Առկայությունը բնության մեջ և սուացման յեղանակները:

3) Հող-ալկալի մետաղների ոքսիդներն ու հիդրօքսիդները: Նրանց հարաբերական լուծելիությունն ու հիմքային ուժը: Ստացումը: Կիրառումը:

4) Հող-ալկալի մետաղների աղերը: Սուլֆատները: Նրանց հարաբերական լուծելիությունը: Գիպս: Կարբոնատներ ու քիկարբոնատներ: Կրտքարեր: Ջրի կոշտությունը և նրա վերացման մեթոդները:

5. Հող-ալկալի մետաղների ֆիզիկական ու քիմիական հատկությունները

Համառոտ ցուցումներ տալուց հետո, թե ինչ տեղ են գրավում հող-ալկալի մետաղները պարբերական սիստեմում և ինչ կառուցյալ ունեն նրանց ատոմները, դասատուն ցուցադրում և այդ մետաղների գորոգում յեղած նմուշները:

Նշում, վոր, այդ մետաղները համեմատաբար փոքր տեսակարար լինու ունեն, պլաստիկ են (մագնեզիումից կարելի յե քարտկ ժապավեններ գել): Մետաղների գդզույն մակերեսը վկայում է, վոր նրանք մասնակի ոքսիգացման են յենթարկվել մակերեսից, բայց վոչ այնպես խորը թափանցած, ինչպես ալկալի մետաղների բեկորած:

Մագնեզիումի ժապավենի մի կտոր ցցում են ջրով լի փորձանոթի մեջ, վորանդ կա ֆենոլֆարեին: Մագնեզիումը ջրից ժանր և (համեմատել նատրիումի հետ) և սովորական տեմպերատուրում ջրի հետ չի սեալցում: Զուրը տաքացնում են մինչեւ վարդաղույն գունավորում առաջանալը: Ջրի յեռման տեմպերատուրում մագնեզիումը սեալցում և ջրի հետ, առաջացնելով մագնեզիումի հիդրօքսիդ:

Կարելի յե ցույց տալ մագնեզիումի այլուրմը ջրի գոլորշիներում: Զուրը յեռացնում են 1 լիտրանոց լայնավեց կոլբայում: Հանդարա յեռալու համար ջրի մեջ ցցում են չթրծած կավե ափակի, պեմզայի: Կամ աղյուսի վոքբիկ կոռորներ: Ցերը կոլբան ցցվի ջրի գոլորշիներով, վառում են մագնեզիումի ժապավենը և ունելիի ոգնությամբ արագ մոցնում ջրի գոլորշիների մեջ, մագնեզիումը շարունակում և այրվել գոլորշիների մեջ: Վորպեսզի մագնեզիումի ուժեղ լույսը չազդի եքսպերիմենտատորի աչքերի վրա, լսվ և ունենալ մուգ ապակիներով ակնոցներ: Զուրը կոլբայում պետք և գասից առաջ նախապես տաքացրած լինի, վորպեսզի գասի ընթացքում իդուր ժամանակ չվատնվի այն տաքացներու համար: Փորձը զնել միայն այն գեղքում, յեթե զաստուն նախապես վարժության միջոցով բավական հմտություն և ձեռքքերել: Հաճախ այդ փորձից հրաժարվում են մագնեզիումի ժապավենները պատճառով:

Մագնեզիումի մակերեսն ուղարկում են մագնեզիումի ոքսիդի մակերեսային թաղանթը պինդ կաված և մետաղին, արգելք հանդիսանալով նրա հետապա ոքսիգացմանը: Մագնեզիումի ոքսիդը վատ և լուծելում ջրում և ջրով չի լվացվում: Ցերե մագնեզիումն այնպիսի պայմանների մեջ դրվի, վոր նրա ոքսիդի թաղանթը շարունակ քայլացվի, այն ժամանակ մագնեզիումն արա-

**Կորեն կոքսիդանա:** Այսպիս, մագնեզիումը սեալյում և նոսր թը-թուների հետ, դուրս մղելով նրանցից ջրածինը:

Ցուցադրվում է համապատասխան փորձը նոսր աղաթթվով ու ծմբական թթվով: Ռեակցիան վերլուծվում է եկեղեցիունական թեորիայի տեսակետից: Այդ ռեակցիայում մագնեզիումն ոքսիդա-նում է (սեղուկցիչ և հանդիսանում), իսկ ջրածինը՝ սեղուկցվում:

Մագնեզիումի ոքսիդն ու հիդրօքսիդը, կալցիումի ոքսիդի ու հիդրօքսիդի նման ռեակցում են ամոնիումի աղերի հետ:



Դրանով և բացատրվում, թե ինչու մագնեզիումը, վորը ջրի հետ սենյակի տեմպերատուրում չի սեակցում, ամոնիումի քրո-բիդի ներկայությամբ դուրս է մղում ջրածինը ջրից: Ցուցադր-վում է համապատասխան փորձ: Փորձանոթում մագնեզիումի փո-շու կամ ավելի լավ և տաշեղների վրա լցնում են ամոնիումի քրո-բիդի լուծույթ և աղածածկում խցանով, վորը կրում է ծայրը բարակեցված ապակյա խողովակի: Ռեակցիան սկսվելուց և մի փոքր անցնելուց հետո վառում են խողովակից դուրս յեկող ջրածինը: Այսպիսով ոքսիդի թաղանթից աղատ մագնեզիումը ջրի հետ սե-ակցում և սովորական տեմպերատուրում:

Այսուհետեւ դրվում է կալցիումի փոխազդեցության փորձը ջրի հետ: Բաժակում անդավորված կալցիումի տաշեղների վրա լցնում են ջուր: Ռեակցիան վերջանալուց հետո պրաոր հեղուկին ավելացնում են մի քանի կաթիլ ֆենոլֆտալեին: Կալցիումն ելք մագնեզիումի նման, ոդում ոքսիդանում է մակերեսից, բայց ոք-սիդի թաղանթը հեշտ լվացվում է ջրով, վորովհետեւ կալ-ցիումի օքսիդը (ավելի ճշշտ կալցիումի հիդրօքսիդը) շատ ավելի լավ և լուծվում ջրում, քան մագնեզիումի ոքսիդը: Միաժամանակ նշվում է, վոր թե մագնեզիումը և թե կալցիումը ավելի պակաս յեռանդով են սեակցում ջրի հետ, քան նատրիումն ու կալիումը:


Ուրիշ փորձերից, վորոնք այստեղ կարելի յե դնել, կնշենք հետեւյալները.

ա) Մազենիքիում և ծծմբի: Սանդի մեջ խառնում են 3 կըշ-ռամաս մագնեզիումի փոշի և 4 կըսամաս ծմբի փոշի: Խառնուր-ը պատեղափում են ասրեստի կարտոնի վրա և մարիս ոգնու-թյամբ վառում: Տեղի յե ունենում ուժեղ բռնկում: Ռեակցիային

արդյունքը տեղափոխում են փորձանոթի մեջ և վրան լցնում նոսր աղաթթու: Զգացվում է ծծմբաջրածնի հուը:

բ) Կալցիում և ծծմբի: Փոքր քանակով կալցիումի տաշեղն ու ծծմբի փոշին տեղափորում են դժվարահալ փորձանոթի մեջ և զգուշությամբ տաքացնում են փորձանոթի հատակը: Ռեժեղ բռն-կում: Փորձանոթի հատակը հալվում է (ափսեյով ավազ):

գ) Մազենիքիում և ածխարքու զագ: Փորձն ամենից հասա-րակ կարելի յե հետեւյալ ձևով դնել: Բանկան կամ լայնավելի կոլ-բան, վորի հատակին ավազ և ցանած, ողի դուրս մղման միջոցով ցցնում են ածխաթթու գազով (ստուգել վառված մարիսով): Մազ-



Նկ. 3

մեղիումի ժապավենը նախապես ուղղում են յեղանգով, այրում են և ապա արագ կերպով մացնում ածխաթթվի ատմոսֆերի մեջ, հոգ տանելով, վոր այրվող մագնեզիումը չկաչի կոլբայի պատե-րին: Ռեակցիան վերջանալուց հետո կոլբայի մեջ լցնում են նոսր աղաթթու և թափահարում: Յույց են տալիս թթվում անլուծելի ածխի հատիկները:

Այս փորձի ուրիշ ավելի բարդ, վարիանտը կարելի յե իրա-դրել հետեւյալ ձևով: Պատրաստում են սարքն ըստ ի նկարի: Բերանը ներքե շրջած անհատակ սրվակի մեջ տեղափորու-են ասրեստի կարտոնի վրա հախճապակյա տիգելը մագնե-զիումի փոշիով, վորի մեջ խրում են մագնեզիումի ժապա-վենի մի կտոր այնպես, վոր նրա ծայրը սրվակից դուրս ցցված

լինի: Ներքերից անց են կացնում ածխաթթու գազի հոսանքը՝ Յերբ սրգակը լցվում է գաղով (ստուգել մարխով), մագնեղիումի դուրս ցցված ծայրը վառում են: Մագնեղիումի ժապավենն ածխաթթվի, մթնոլորտում սկսում է այրվել, հետո այրվում է նաև մագնեղիումի փոշին:

Տիգելի մեջ գտնում են ածխի մասսան, մագնեղիումի ոքսիդ և չայրված մագնեղիում: Մասսան (սառելուց հետո) մշակում են նոսր աղաթթվով, վորն ազդում է մագնեղիումի ունրա ոքսիդի վրա, տալով մագնեղիումի լուծվող քլորիդ, իսկ ածուխը մնում է անփոփոխ: Հեղուկը ֆիլտրում են և ցույց տալիս ֆիլտրի վրա նոտած ածխի հատիկները:

գ) Մագնեղիումն ու կալցիումի կարբոնատը: Եռւրբ փոշիացրած կալցիումի կարբոնատը խառնում են մագնեղիումի հետ (հավասար քանակներով) և այդ խառնուրդից 3—4 գ տեղափորում են չոր փորձանոթի մեջ: Բոնելով փորձանոթն ունելիով (փորձանոթի բերանը չպետք է ուղղված լինի աշակերաների կողմը), այն զգուշությամբ տաքացնում են, սկսելով խառնուրդի վերսիշերացից: Տեղի յեւնենում բուռն ուսակցիա, փորձանոթը սովորաբար ճեղքվում է: Ծեկա կացիան վերջանալուց և փորձանոթը պաշտելուց հետո ուսակցիայի արդյունքը մշակում են ափսեյի մեջ նոսր աղաթթվով, վորը կալցիումի, մագնեղիումի ոքսիդները և ուսակցիայի չենթարկված կալցիումի կարբոնատն ու մագնեղիումը վերածում է լուծելի քլորիդների: Հեղուկը ֆիլտրում են և ցաւցադրում ֆիլտրի վրա նոտած ածխի հատիկները:

ե) Կալցիումն ու պղնձի օբյեկտը: Յերկաթյատիկելի մեջ տեղափորում են 2—3 գրամ պղնձի ոքսիդի փոշու և կալցիումի տաշեղների եկվիմուեկուլյար խառնուրդը: Տիգելլ տաքացնում են քաղ պահարանի տակ: Տեղի յեւնենում ուժեղ բռնկում: Տիգելում կարելի յեւ հայտարերել պղինձը:

Ի հարկե, կարեք չկա բոլոր այդ փորձերը ցուցադրել: Բավական ե ցույց տալ մագնեղիումի (կամ կալցիումի) փոխազդեցությունը ծծմբի հետ և ածխածնի ու պղնձի ուեղուկցման փորձերից մեկը: Բոլոր ուսակցիաները վերլուծում են ելեկտրոնական թեռիքայի տեսակետից:

Համեմատելով այս փորձերի արդյունքները ալկալի մետաղների հատկություններից աշակերտներին ծանոթ տվյալների հետ կարելի յեւ անել հետևյալ յեզրակացությունը.

Ալկալի մետաղներից հողալկալի մետաղներին անցնելիս նշվում է:

ա) Մետաղի տեսակաբար կզոք աճումը, թ) հալման կետի բարձրացումը (և, ավելացնում է դասատուն, յեռման կետի բարձրացումը), գ) սքսիդանալու տեսնդենցի նվազումը:

## 2. Առկայությանը բնուրյան մեջ և ստացման յեղանակները

Մագնեղիումի և հողալկալի մետաղների առանձին ելի դեռ հեշտությամբ են արձակում իրենց վալենտական ելեկտրոնները: Հողալկալի մետաղները, ալկալի մետաղների նման, ուսակցիաների ընթացքում պահպան են իրենց վորպես յեռանդուն ռեզուլցի/շներ: Այստեղից կարելի յեւ յեզրակացնել. 1) վոր հողալկալի մետաղները, ալկալի մետաղների պես, ազատ վիճակում բնության մեջ չեն գտնվում, և 2) վոր նրանց ստացման յեւանակը պետք է նման լինի ալկալի մետաղների ստացման յեզրակին:

Կանգ պետք է առնել միայն մագնեղիումի ստացման յեղանակի վրա հավաքած աղի ելեկտրոլիզի միջոցով և մագնեղիումի կիրառման վրա:

Վորպես խնդիրներ, այս և նախորդ բաժիններում անցած նյութն ամրացնելու համար, կարելի յեւ առաջարկել հետեյալները:

1. № 43 և 45 խնդիրները կայուն դասազրքից (եջ 72):

2. Ի՞նչ նմանություն կա հետեյալ պրոցեսների մեջ մագնեղիումի այրումը թթվածնի մեջ, կալցիումի միացումը ծծմբին, կալցիումի ուսակցիան ջրի հետ, մագնեղիումի ուսակցիան աղաթթվելի հետ:

3. Խնդիրը ստանալ մետաղական կալցիում, յելնելով կալցիումի քլորիդի լուծույթից:

4. Ի՞նչ տեղի կունենա, յեթե այրվող մագնեղիումը մտցընենք քլորի մթնոլորտի մեջ:

## 3. Մագնեղիումի և հողալկալի մետաղների սքսիդներն ու նիդրսիդները

Զափազանց կարեսը և նշել, վոր հատկությունների որենաշափ փոփոխությունն ատոմական կշիռների աճելուն զուգընթաց նկատվում է վոր միայն աղատ ելեմենտների վերաբերմամբ, այլև նրանց միացությունների: Այդպիսի որինաչափություն նըշ-

պել և իր ժամանակին հալոգենաջրածնական միացությունների դեպքում: Այժմ, հողալկալի մետաղներն ուսումնասիրելիս մենք կարող ենք ուրիշ որինակներ բերել վոր վերաբերում և առաջի հերթին նրանց հիդրօքսիդների լուծելիությանն ու ուժին, վորպես հիմքերի:

Դասատուն հիշեցնում ե աշակերտներին, վոր մագնիումի ու կալցիումի ուեակցիան ջրի հետ քննարկելիս նշվեց, վոր մագնիումի հիդրօքսիդն ավելի վատ և լուծվում ջրում, քան կալցիումինը: Հետաքրքիր ե, թե ինչպես են լուծվում սորոնցիումի և բարիումի հիդրօքսիդները ջրում, ավելի լավ, թե վատ՝ համեմատած մագնիումի ու կալցիումի հիդրօքսիդների հետ: Այս հարցը կարեոր և պարզել, թե արդյոք պարբերական սխտեմում գտնվող ելեմնաների դիրքի և նրանց միացությունների լուծելիության միջև մի վորկե կապ կա, թե վոչ:

Այս հարցի պատասխանը կարելի յե ստանալ, կատարելով համապատասխան փորձեր, վորոնք դասատուն հանձնարարում և հենց աշակերտներին:

Աշակերտների սեղանների վրա դրվում են սրվակներ  $MgCl_2$ ,  $CaCl_2$ ,  $SiCl_2$ ,  $BaCl_2$ -ի լուծույթներով, հավասար մոլյար կոնցենտրացիաներով: Յեթե «մոլյար կոնցենտրացիա» հասկացողությունն աշակերտներին անծանոթ ե, ապա կարելի յե գործածել հավասար տոկոսային կոնցենտրացիաներ: Այդ լուծույթները լցնում են 4 փորձանոթի մեջ, յուրաքանչյուրի մեջ մոտավորապես հավասար ծավալներով: Ամեն մի փորձանոթին պիտեսի ոգնությամբ ավելացնում են մի կաթիլ նատրիումի հիդրօքսիդի 10 տոկոսանց լուծույթ, թափահարում են փորձանոթները և դիտում, թե արդյոք նստվածք առաջանում ե, թե վոչ: Նատրիումի հիդրօքսիդը շարունակում են ավելացնել բոլոր փորձանոթների մեջ (1—2 կաթիլ) այնքան, մինչև վոր փորձանոթներից մեկի մեջ (նշում են թե վորի) առաջանա նստվածք: Այսուհետեւ ելի շարունակում են ավելացնել նատրիումի հիդրօքսիդի լուծույթը, և նշում են նստվածքն առաջանալու մոմենտը յերկրորդ, յերրորդ և, վերջապես, չորրորդ փորձանոթի մեջ: Այսպիսով հաստատում են, վոր հողալկալի մետաղների հիդրօքսիդները, ըստ իրենց լուծելիության ավելացման հետեւյալ կարգով կարելի յե դասավորել.

$Mg(OH)_2$ ,  $Ca(OH)_2$ ,  $Sr(OH)_2$ ,  $Ba(OH)_2$

Փորձը ցույց ե տալիս նաև, վոր բոլոր հողալկալի մետաղ-

ների հիդրօքսիդները շատ ավելի վատ են լուծվում, քան նատրիումի հիդրօքսիդը:

Հիմքի ուժեղության մասին դատելու համար դիմում ենք համապատասխան աղերի հիդրօքսիդին: Յեթե լակմուսով ստուգենք հետեւյալ լուծույթները՝

$MgCl_2$ ,  $CaCl_2$ ,  $BaCl_2$ ,

ապա նրանք բոլորն ել չեղոք ուեակցիա ցույց կտան:

Հիդրօքսիդն զգալի արագանում և տեմպերատուրը բարձրացնելիս: Դասատուն փորձանոթի մեջ (թեք բռնելով այն) տաքացնում ե կրիստալական ջուր պարունակող մագնիզիումի քլորիդը: Կարճ ժամանակից հետո փորձանոթից սկսում ե դուրս գալ սպիտակ ծուխ: Խոնավ կապույտ լակմուսի թուղթն այդ ծխից կարմրում ե: Այդ ծուխն աղաթթվի կաթիլներն են, վոր գոյացել են հիդրօքսիդի հետեւանքով: Կալցիումի քլորիդի հիդրօքսիդի համար պահանջվում ե շատ բարձր աստիճանի տաքացնում: Սակայն բարիումի և նատրիումի քլորիդները նույնիսկ այդ բարձր տեմպերատուրում ել չեն հիդրօքսիդում: Հողալկալի մետաղների հիդրօքսիդներն ըստ իրենց հիմքայնության աճման կարելի յե հետեւյալ կարգով դասավորել:


$Mg(OH)_2$ ,  $Ca(OH)_2$ ,  $Sr(OH)_2$ ,  $Ba(OH)_2$

#### 4. Հողալկալի մետաղների աղերը

ա) Սուլֆատներ: Մագնիզիումի և հողալկալի մետաղների սուլֆատների հարաբերական լուծելիությունը կարելի յե պարզել կամ նույն մետաղների հիդրօքսիդների լուծելիությունը պարզելու փորձին անալոգ փորձերով, կամ ել հետեւյալ փորձով, փորձ մենք հանձնարարում ենք զնել վորպես լաբորատոր աշխատանք:

Առաջին հերթին աշակերտին հանձնարարվում ե ստուգել մագնիզիումի սուլֆատի լուծելիությունը: Հետո պատրաստում են մագնիզիումի սուլֆատի հագեցած լուծույթ և նրա վրա կաթիլ կաթիլ ավելացնում են կալցիումի քլորիդի կոնցենտրացիա լուծույթ: Իջնում ե կալցիումի սուլֆատի սպիտակ նստվածքը: Նա ավելի վատ և լուծվում, քան մագնիումի սուլֆատը: Կալցիումի քլորիդի ավելացնումը շարունակում են այնքան ժամանակ, մինչև վոր փոքր մասը և համոզվելու համար, վոր կալցիումի քլորիդ ավելի դադարում և նստվածքը առաջանալը: Ֆիլտրում են հեղուկի մի գործը մասը և համոզվելու համար, վոր կալցիումի քլորիդ ավել-

լացված եր բավարար քանակությամբ, ֆիլտրատին ելի մի քանի կաթիլ կալցիում քլորիդ են ավելացնում, Յեթե նստվածք չի գոյանում, ապա ֆիլտրելը շարունակում են, մինչև վոր ստանում են պարզ ֆիլտրատ. ստացված ֆիլտրատից վերցնում են 2—3 մմ և վրան ավելացնում բարիումի քլորիդի լուծույթ: Նըստվածքի գոյանալը վկայում է, վոր բարիում սուլֆատն ավելի վատելուծվում, քան կալցիում սուլֆատը: Այսպիսով սուլֆատների լուծելիությունը փոփոխվում է նույնպես որինաշափ կերպով և ըստ նվազեցման հետեւյալ կարգով՝



այսինքն, այս գեղքում, համեմատած հիդրօքսիդների հետ, լուծելիության կարգը հակառակն է:

Այնունետեւ, հաջորդ ցրույցը, նվիրված առանձին սուլֆատներին, մանավանդ կալցիում սուլֆատին, կարելի յեւ ուղեկցել գիպսի «կապակցումը» ցույց տվող փորձով: Հախճապակյա ափսեյի մեջ լցնում են մի քիչ այրած գիպս և կաթիլ-կաթիլ ավելացնում են այնքան ջուր, վոր ստացվի թանձը մասսա: Մնալով (մինչև հետեւյալ դասը) նա կարծրանում է:

բ) Կարբոնատներ: Դասատուն մատնանշում է, վոր հողակալի մետաղների կարբոնատները, մանավանդ մագնեզիումինն ու կալցիումինը խոշոր գեր են խաղում յերկրի կեղեռում տեղի ունեցող յերեսույթների մեջ: Ցուցադրվում են մագնեզիտի, կալցիտի, խանգական շպատի, կրաքարի (կավիճ, մարմար), մերգելի, դոլոմիտի նմուշները: Պատմում են նրանց ծագման մասին: Հողակալի մետաղների կարբոնատների առկայությունը խոշոր կուտակումներով հաճախ յերկրի մակերեսին (կրաքարային սարել են), ցույց ե տալիս նրանց վատ լուծելիությունը:

Վերջին հանգամանքը ցուցադրվում է հետեւյալ փորձերով (դեմոնստրացիոն):  $\text{MgCl}_2$ ,  $\text{CaCl}_2$  և  $\text{BaCl}_2$  լուծույթներին ավելացնում են նատրիումի կարբոնատի լուծույթ: Բոլոր դեպքերում իջնում են կարբոնատների նստվածքները:

Բնական կարբոնատները հիմնական յելանյութ են ծառայում հողակալի մետաղների այլ միացությունների, մասնավորապես կրի ու մագնեզիումի ոքսիդի, արդյունաբերական ստացման համար:

Մարմարի այրման փորձը (դեմոնստրացիոն) ավելի լավ է կատարել զոդման այրոցի կամ պրիմուսի բոցում: Մարմարի փոքր

կտորներ (ընտրում են տափակ կտորները) ունելիի ողնությամբ մացնում են բոցի մեջ և այնքան շիկացնում, մինչև վոր ամբողջ կտորը կամ գոնե նրա բարակ ծայրերը կախեն լուսավորվել: Այլ բաժնեմունքները հանգցնում են ջրով լցված ափսեյի մեջ: Ջրին ավելացնում են ֆենոլֆտալին:

Ավելի հասարակ ձեռվ կարելի յեւ կատարել մագնիումի կարբոնատի այրումը, վորը քայլքայվում է ավելի ցած տեմպերատուրում: Համապատասխան փորձը կարելի յեւ հանձնաբարել նաև լուրջաբար աշխատանքի համար:

Չոր փորձանոթների մեջ (նրանց մինչև  $\frac{1}{4}$  ծավալը) տեղափորում են մագնեզիումի կարբոնատ: Փորձանոթները փակում են խցանով, վորը կրում է գաղատար խողովակ: Այս խողովակի ծայրըն ընկղմում են կրածրի (կամ բարիտաջրի) մեջ: Փորձանոթը համարյա հորիզոնական գիրքով (շատ չնշին թերությամբ) ամրացնելով շտատիվի վրա, տաքացնում են սպիրալյորոցի ողնությամբ: Կրածրի (կամ բարիտաջրի) պղտորվելը վկայում է ածխաթթվի անջատման մասին:

Բացի այդ, աշակերտները փորձեր են անում համոզվելու համար, վոր հիդրոկարբոնատներն ավելի լուծվում, քան կարբոնատները (տես դասագիրք էջ 271, 272, 273):

Լրացուցիչ կերպով դասատուն ցուցադրում է հետեւյալ փորձը: Մագնեզիումի բլորիչի շատ նոր լուծույթին ավելացնում են մի քիչ սողայի լուծույթ և կիպսի ապարատից խառնուրդի մեջ անցկացնում են ածխաթթվու գազ՝ մինչև նստվածքի լուծվելը:

Բացի այն, ինչ վոր շարադրված է դասագրքում հիդրոկարբոնատների առաջացման պրոցեսների նշանակության մասին, կարելի յեւ նշել նաև հետեւյալը:

Կալցիումն ու մագնեզիումը, մանավանդ առաջինը, չափազանց կարենը դեր են խաղում բույսերի և կենդանիների կյանքում: Միջին հաշվով կենդանի նյութի մեջ նույնքան տոկոս կարցիում կա, ինչքան և ածխածին ու ազոտ: Կալցիումը մանում է շատ կենդանիների արտաքին (խեցիների) և ներքին կմախքի մեջ: Մասնավորապես, վողնաշարավոր կենդանիների վուկորների անորգանական բաղադրիչ մասը բաղկացած է կալցիումի առերից: Բոլոր կենդանի հյուսվածքները վողողող հեղուկի մեջ կալցիումի գործ կենդանի հյուսվածքները նույնպես անհրաժեշտ պայման է նրանց նորմալ գործունեյության համար: Կենդանիների արյան և բույսերի հյութերի մեջ կալցիումի աղերի նվազումը կենսական ֆունկցիան հյութերի մեջ կալցիումի աղերի նվազագույնը կենսական ֆունկցիան:

ների ուժեղ խանգարում և առաջացնում, իսկ շատ նվազումն անփուսափելիորեն տանում ե դեպի մահ: Թե ինչքան հակայական աշխատանք պիտի յերեմն կատարեն որդանիզմերն իրենց անհրաժեշտ կացիումը ձեռք բերելու համար, ցույց են տալիս Գ. Բիշովի հաշվը: Մի վոստրեն իր խեցին կառուցելու համար պետք ե անցկացնի իր որդանիզմի միջով իր սեփական քաշից 27000—66000 անգամ զերազանցող քանակությամբ ջուր: Վորովինակու որդանիզմներին մատչելի յեն միայն լուծելի աղերը; ապա հասկանալի յէ դառնում, թե ինչ հսկայական նշանակություն ունի յերկրի բոլոր կենդանի բնության համար անլուծելի կացիումի կարբոնատի փոխանցումը լուծելի հիդրոկարբոնատի:

Կացիումի աղերի լայն տարածվածությունը բնության մեջ ցույց տալու համար կարելի յէ կատարել հետեյալ փորձը (յեթե ժամանակ կլինի): Նախապես ցույց ե տրվում այն ռեակցիան, վորով հնարավոր ե հայտաբերել կացիումի փոքր քանակությունները—ռեակցիան ամոնիում ոքսալատի հետ (այս աղի բացայության դեպքում՝ կացիումի փորեն աղի լուծույթի վրա ցնել ամոնիակ և ապա ոքսալաթթու): Այսուհետև այդ նույն ռեակցիայով ստուգում են ջրմուղի կամ ջրհորի ջուրը:

Կացիումի սուլֆատի զերը դիրտ (հակո՛) բոնելու ժամանակ կարելի յէ ցուցագրել հետեյալ փորձով: Գիպսաջուրը փորձանոթի մեջ տաքացնում են մինչև նրա պղտորփելը: Գիպսը տաք ջրի մեջ ավելի վատ ե լուծվում, քան սառը:

Զրի կոչության մասին խոսելիս կարելի յէ հանձնարարել հետեյալ փորձը: Կոնածե կոլբայի մեջ լցնում են վորոշ ծավալ (10—15 մմ<sup>3</sup>) թորած ջուր: Այս ջրին բյուրեալից կաթիլ-կաթիլ ավելացնում են, միաժամանակ թափահարելով, սապոնի լուծույթ (12 մաս լավ, կավ չպարունակող սապոնը լուծում են մի զգալ ջրի մեջ), մինչև վոր կառաջանա Յ րոպե շարունակ չանհայտացող փրփուր: Նշում են դրա համար ծախսված սապոնաջրի կամ կաթիլների թիվը կամ ծավալը: Այնուհետև մաքուր ջուրը փոխարինում են գիպսաջրով և նույն փորոշումը կատարում են—այս դեպքում սապոնաջրը ավելի շատ կծախսվի: Վերջապես կատարում են փորձ գիպսաջրի հետ, վորին սողա յէ ավելացրած: Նորից սապոնաջրի ավելի քիչ քանակից առաջանում ե կայուն փըրփուր:

Ավելի լավ ե փորձը կազմակերպել վորպես լաբորատոր

լինգիր—աշակերտները պետք ե բացատրեն, թե ինչու կայուն փրփուր առաջացնելու համար ամեն մի դեպքում ծախսվում է տարրեր քանակությամբ սապոնաջուր:

## ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ X ԴԱՍՄՐԱՆՈՒՄ<sup>1)</sup>

### I

10-րդ դասարանում քիմիայի դասընթացը կրկնելու համար ժամանակ հատկացնելու անհրաժեշտությունն արդարացվում է, առաջի հերթին, այս առարկայի առանձնահատկությամբ: Քիմիայի հիմունքների յուրացումը չի ընթանում սովորական ճանապարհով՝ «հեշտից գեղի գժվարը»: Ընդհակառակը, նույնիսկ տարրական նյութի խոր ըմբռնումն այստեղ շատ հաճախ անհրաժեշտ է զարձնում համեստալ այն, ինչ վոր պահպելու յէ դասընթացի վերջին:

Քիմիայի դասաւուն շարունակ ստիպված է լինում կամ վերադադար անցածին, գաղափարները վերջնականորեն պարզելու համար, կամ ե քսկուլպախա անել գեղի «մշուշապատ ապագան» «ավանսովի» անհրաժեշտ տեղեկությունները վերցնել, լավ յուրացնելու համար:

Այսպիս թե այսպես (յերկու գեղքումն ել) անհրաժեշտություն է ծագում ինչպես հաճախակի ընթացիկ կրկնողության, այսպիս և ամփոփելու կրկնողության կուրսի վերջում:

Միջնակարգ գպրոցն ավարտելու մոմենտին աշակերտները ձեռք են բերած լինում արդեն մի շարք հատկություններ, փորոնք այնպիս անհրաժեշտ են քիմիայի հիմունքները յուրացնելու համար, նրանց մեջ զարգանում ե ընդհանրացնելու ընդունակությունը, նրանք ավելի լավ են ըմբռնում տերմինոլոգիան, տիրապետում են պատմությանը, ամրանում և հետաքրքությունը դեպի առարկան: Դրա հետ միասին անցածից շատ բան արդեն մոռացված է լինում: շատ հաճախ մոռացված են լինում «մանր-մոռնը» բաներ, «փորոնք ժամանակին բավարար չափով խորը յուրացված չեն յեղել, բայց վորոնց չգիտենալն այժմ խանգարում ե համուն լինելու հավակնություն ունեցող յերիտասարդին բավականաչափ խորն ընդհանրացնել այն տեղեկությունները, վոր նա ստա-

1) Կազմեց Լ. Ա. Դուբինինը (Ծացկու անվան գպրոցի դասաւու ՄԴԿՀ ինստիտուտի գիտական թղթակից):

շել և միջնակարգ պալրոցում: Սակայն, քիմիայի հիմունքների պարզ, սիստեմատիկ իմանալը միանգամայն անհրաժեշտ ե դպրոց ավարառողին, անկախ այն բանից, թե նա ԲՈՒՀ և մոնելու, արտադրության, թե մի այլ հաստատության մեջ աշխատելու յե:

Վորոշ փորձի հիման վրա կարելի յէ նշել հետեւյալ, բավական հաճախ նկատվող բացերը դպրոցն ավարտողների քիմիական դիտելիքների մեջ:

Սովորաբար բավական չեն գիտելիքները կոնկրետ նյութերի մասին, իսկ կլասիֆիկացիայի հասկացողությունները (խմբերի, նյութերի դասերի ընդհանուր հատկությունները) սիստեմատիկ են, զուրկ են հիմնականը հասկանալու խորություննից, լավ չեն հասկացվել փոխադարձ կապերը և նյութերի փոխանցումները մեկը մյուսին: Դրա վրա ավելանում ե ընդհանրացնող դատողությունների ավելորդ կատեգորիկությունը, վորը հիմնավորված չե կոնկրետ գիտելիքներով:

Դպրոց ավարտողները բավականաչափ լավ չեն հասկանում քիմիական սիմբոլիկան և նրա հետ վարկելու վարժություն չունեն: Վորպես կանոն, նույնիսկ լավագույն գեղագիտությունը պարագաները մասին համապատասխան տիրապետում են հալասարումներին ու վալենցի կանոններին, ֆորմուլան գրելիս նրանք կոնկրետ պատկերացում չունեն նյութի մասին, իսկ հավասարումը գրելիս չեն մոտածում հիմնական որենքների մասին, վորոնցով պայմանավորված ե ունակցիայի իրական ընթացքը: Այդ որենքները յուրացվել են միայն այն որինակների համար, վորոնք բերվել են որենքներն իլյուստրացիայի յենթարկելու համար՝ առանց հետագա զարդացում ստանալու: Աշակերտը կարող ե ձևակերպել նյութերի կլիոների պահպանության որենքը, նույնիսկ որինակը բերել (բնուրոշ ե, վոր որինակները հաճախ բերվում են Շ-րդ դասարանի նյութերից), բայց, այն հարցին, թե ինչու հավասարման յերկու կողմերում առանձների թիվը պիտի հավասար լինի, նա գմբարանում ե պատասխանել:

Մի ուրիշ, քիմիական սիմբոլիկայից ոգտվելու հետ կապված, ավելի հաճախ նկատվող բացը հիմնվում ե ելի կոնկրետ նյութերի մասին պատկերացում չունենալու վրա: Վորպես որինակ մետաղի փոխազդեցությանը թթվի հետ, թե աղինը աղի հետ, աղինը թթվի հետ, նրանք կարող են բերել կամայական, միանգամայն անտեղի որինակներ: Այսպես՝ պղնձի կողմից ջրածնի դուրս մղումը թթուներից, կոմ պղնձի ոքսիդի ունակցիան ջրի հետ,

հանդիսանում են, դժբախտաբար, աշակերտների բերած սովորական «որինակները»:

Դա բացատրվում ե նրանով, վոր աշակերտները չունեն հաստատում գիտելիքներ քիմիական միացությունների հիմնական դասերի հատկությունների մեջ ընդհանուրի և յեղակի մասին:

Սականաւոր գիտելիքների հիշված բացերի մեջ նշանակալի տեղ ե բռնում նրանց անկարողությունն ուսումնական գրականությունից ոգտնելու: Այդ բանը մենք մոռանում ենք նրանց սովորեցնել: Կայուն դասազրում, թեև վոչ բավականաչափ քանակով, բայց կան մի շարք ոգտակար աղյուսակներ, լուծելիության, ատոմական կշիռների, լարման շարքը և այլն: Սակայն նրանցից աշակերտներն ոգտվում են հազվագեղ, այն մոմենտին, յերբ գասատուն բացատրում ե այդ աղյուսակը: Բոլորովին չեն կարող ոգտվել (շատ տարրինակ ե) զրբի վերջում յեղած այբուբենական ցանկից: Այդ պատճառով զարմանալի չե, վոր ԲՈՒՀ ընդունվելիս մեր Մշանավարտները բավական անոգնական են լինում, նրանք չունեն զրբեց ինքնուրույն ոգտվելու ելեմնատար վարժություն:

Բոլոր այդ բացերն ունեն իրենց պատճառները, վորոնց քննարկմամբ մենք այստեղ չենք զբաղվի: Հիշեցնենք միայն վերել նշվածներից մեկը: Շատ կարենը, ընդհանուր բաներ աշակերտներն ուսումնամիջել են կուրսի մկրտում, յերբ նրանց կոնկրետ գիտելիքների պաշարը գեռ քիչ եր: Այսպես, քիմիական միացությունների հիմնական զաները նրանք սկսեցին ուսումնամիջել, յերբ նրանք գեռ յերեք նյութ գիտելիքն՝ ջուրը, թթվածինը և ջրածինը:

Ծրագրիը կազմված ե այն իմաստով, վոր քիմիական միացությունների հիմնական զաների թեմայի ընդհանուր հասկացությունների կոնկրետ մատերիալը հետազոտում քիմիական ելեմնաներն ուսումնամիջելիս կարգացումը կայուն դասագրքում պետք յեղածի չափ չի արտացոլված, իսկ դասատուներն ել դրա վրա միանգամայն անբավարար չափով են աշխատում: Այդ պատճառով ել առավար արդյունք և ստացվում:

Սակայն չի կարելի տաել, վոր աշակերտները բոլորովին զուրկ են առանձին փաստերի զիտելիքներից, առանձին փաստեր աշակերտները բավականաչափ գիտեն: Միայն թե այդ փաստերն

Քրար հետ անհրաժեշտ չափով շաղկապված չեն: Այդ պատճառով՝ կրկնողությունը 10-րդ դասարանում, համենայն գեպս առաջմ, միանգամայն անհրաժեշտ միջոցառում ե:

Բայց կրկնողությունը 10-րդ դասարանում չի կարող կազմակերպվել տառացի և միայն վորպես կրկնողություն։ Աշխատանքի նման ըմբռնուումը պահանջվող արդյունքները չի տա: Կըրկնողությունը 10-րդ դասարանում նպատակ ունի նաև՝ կրկնելու ամենագլխավորը, յերկրորդ՝ նշանակալի չափով, խորացնելու, զարգացնելու ամբողջ նախկինում ստացած քիմիական գաղափարները, այն ընդհանրացումների լուսաբանությամբ, վորացակերտները յուրացըրել են 9 և 10-րդ դասարաններում։ Հենց այդ հաշվով ու այդպիսի նպատակներով ե կազմված 10-րդ դասարանի կրկնողության ծրագիրը։ Ծրագրում տված մատերիալոց, ամեն մի առանձին դեպքում, դասատուն պետք ե ընտրի վորպես գլխավորն այն, վոր 10-րդ դասարանում ամենից թույլ ե յուրացված։ Ուրիշ խոսքով՝ կրկնելիս պետք ե հաշվի առնել աշակերտների գիտելիքների մակարդակը։ Բայց զպրոցների զգալի մասի համար կարելի յենախապես պատճ, վոր յուրացրած այդպիսի թույլ բաժինները կիրակում «Աքսիդներ» Հիմքեր։ Թթուներ։ Աղեր» և «Ելեմենտների ու նրանց միացությունների ակնարկ ըստ պարբերական սիստեմի»։ Այդպիսի դպրոցներում այդ բաժինները պետք ե դառնան կրկնություններ կազմակերպելու ժամանակ վորպես կենտրոններ, զրանց վրա պետք ե ծախսվի ժամանակի մեծագույն մասը։ Բայց կրկնելիք մատերիալի դասավորման ընդհանուր ստրուկտուրան պետք ե խիստ սիստեմատիկ լինի, այսինքն՝ նա պետք ե համապատասխանի ուսման նյութի շաբարման այն հաջորդականությանը, վորն ընդունված ե յեղել ըստ ծրագրի քիմիան ուսումնասիրելիս, սկսած 7-րդ դասարանից։ Ի նկատի ունենալով, վոր 10-րդ դասարանում քիմիայի կրկնողության համար հատկացված ե 56 ժամ, ըստ այդ ժամանակի կրկնագոյնությունը կարելի յեն դասավորել հետեւյալ ձևով։

1. Ատոմա-մոլեկուլային ուսմունքի հիմնական դրույթները  
(ատոմա-մոլեկուլային ուսմունքի համառոտ պատմական ակնարկ) —  
2. Ժամ:

2. Կշռի պահպանման ու բաղադրության հաստատունության  
որենքներն առումա-մոլեկուլային ուսմունքի լուսաբանությամբ—  
1 ժամ

### 3. Պարզ նյութ և ելեմենտ—1 ժամ:

4. Ատոմի կշիռը և ատոմական կշիռը: Ամենահսարակ ֆորմուլների արտածումն անալիզի տվյալների հիման վրա: Մոլեկուլյար ֆորմուլ: Ալլոտրոպիա: Գրամմոլեկուլ: գրամմատօմ. գրամմեկոմիա—6 ժամ:

5. Վարժություններ ու խնդիրների լուծում—10 ժամ:

#### 6. Ասոմի կառույց: Վալենց—3 ժա

6. Աղսիղներ, հիմքեր, թթուներ, աղեր: Լուծույթներ—10

JULY

8. Պարբերական որևէնք և պարբերական սիստեմ—2 ժամ:

9. Ելեմնունելի ու նրանց  
առաքեռական սիստեմի—20 ժամ:

10. Ծեզրափակիչ ընդհանուրացումներ: Քիմիան ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ—2 ժամ:

1

«Ատոմա-մոլեկուլային ռևմունքի հիմնական դրույթները»  
բաժնի կրկնության ժամանակ գասատուէն ամենից դժվար ե մնալ  
անհրաժեշտության շրջանակներում, այնքան հետաքրքիր ե այդ  
նյութը, այնքան գրավիչ ե այն հնարավորին լայն լուսաբանե-  
լը և այնքան մեծ են աշակերտների պահանջներն այդ հասա-  
կում: Բայց անհրաժեշտ ե լավ հիշել վոր ամբողջ ուշագրությու-  
նը պետք ե ուզգել հիմնականի ու գլխավորի վրա: Այնուամենայ-  
նիվ, այդ գլխավորից ավելին կարելի յե անցնել արտագրղոցա-  
կան ժամերին: Այդ շրջանում չպետք ե նաև այնպես վարվել,  
ինչպես գտ անում են յերբեմն վորոշ գասատուներ, այդ  
աշխատանքի կեսարոնը գտըճնելով աշակերտների զիկուցութեներն  
ըստ ավելի ընդարձակ գրականության: Այն, ինչ վոր լավ ե արտա-  
զպրցական ժամերին (յերբ հավաքվում են կամավոր կերպով),  
բոլորովին անթույլատրելի յե գտափ ժամանակի: Պետք ե հասկա-  
նալ վոր աշխատանքի այդ ձեւը գտափ ժամանակի ընդհանրապես  
վնասակար ե. աշակերտների մեծ մասն անպատճիւմանսու յե  
գտանում (մի զիկուցող, իսկ մնացածները լասդներ), նա բոլորովին  
չի տալիս սպասած արդյունքները, չի զարգացնում աշակերտների  
մեջ լայն աշխարհահայացք, այլ հաճախ աշակերտները գերազա-  
հատում են իրենց գիտելիքները, վորովհետեւ ավելի հեշտ ե գործ  
ունենալ գիտության «գագաթների» հետ և շատ ավելի դժվար ե  
ու կարելոր տիրապետել նրա հիմունքները: Հայտնի յեն, որինակ,

գեղքեր, յերբ ԲՈՒՀԸ ընդունվողները քննության ժամանակ խոսում են ամենաժամանակակից թեորիաների, նույնիսկ քվանտական թեորիա, ի մասին, մինչդեռ կանգ են առնում հաճախ ամենապարզ գաղափարների ու պրիմիտիվ խնդիրների տառջ: Իսկ յեթե նկատի ունենալ, վոր բոլոր այդ «թեորիաները» շրջանավարտի բերանում մեծ մասամբ հանդիսանում են սուրբուգատներ, ապա և նրա գիտելիքներն ել այդ դեպքում հաճախ ֆիկցիս յեն գումարում:

Վերջապես, ատոմա-մոլեկուլարյին ուսմունքի մատերիալը չի կարելի համարել «ֆակուլտատիվ»: Ընդհակառակը, դաստառի պատասխանավորթյունն այսուղ առանձնապես աճում է, վորովետե այս բաժնով նա իր աշակերտների մատերիալիստական աշխարհայցը ձևավորելու (այս մասում) վերջին, յեզրափակող աշխատանքն և կատարում: Այս բաժինը դաստառն առաջի հերթին ինքն և կրկնում, հանձնարարելով աշակերտներին, և այդ պետք է անի չափազանց պատասխանատու և հատակ կերպով:

Աշակերտներին յուրացնել տալու համար կարելի յե առաջարկել հիմնական գրույթների հետեւյալ ցանկը.

I. Անհրաժեշտ և աշակերտներին իմանալ վոր «մտահայեցուական» ձևով ատոմիստական համոզունքներ կային գեռ հնագույն ժամանակներում, սրանք ծագել են Լեվիթպի և Դեմիկրիտի մոտ (ծրդ դար մինչև մեր երան), զարգացվել են Եպիկուրի կողմից (III. դար մինչև մեր երան) և շարադրված են յեղել Լուկրեցիոսի կողմից «Իրերի բնության մտախ» պոեմայում:

Կարելի յե այդ պոեմից համապատասխան կտորներ կարգաբար ույղ ուսմունքը կարելի յե յեզրափակել հետեւյալ գրույթներում: «Հին ազգերը համոզված եյին, թե

1) Գոյություն ունի միայն մի սկզբնական ժամաներիա:  
2) Մատերիան վոչ վոչնչանում է, վոչ ել ստեղծվում:  
3) Մատերիան անընդհատ չե, այլ ունի հատիկավոր կառուցվածք:

4) Մատերիան կազմված է ատոմներից, վորոնք անտեսանելի յեն, ֆիզիկապես անբաժանելի, անմահ և անանցանելի:

5) Աստմների արանքում զատարկություն է:  
6) Տարրեր նյութերի ատոմները տարրերվում են իրենց ձևով, մեծությամբ, կառով:

7) Ատոմները հարատե շարժման մեջ են, նրանք բազիվում

են իրար հետ և վանդում ինչպես փոշու մասնիկները արևի լույսի ճառագայթներում:

8) Նյութերը տարրերվում են իրարից նրանց կազմող ատոմների բնույթով, թվով և դասավորությամբ»<sup>1)</sup>:

Այդ գրույթները հարկավոր եռ ուղղակի կարգալ և հրավիրել աշակերտների ուշադրությունն այն հանգամանքի վրա, վոր գրանք բոլորը «սրամիտ յենթադրություններ» եյին, չհիմնված վոչ մի փորձի վրա: Հետագա զիտնականները, վորոնք այդ ուղղությամբ աշխատում եյին հքապերիմենտալ հիմքերի վրա, յերբեք չեյին անականում այդ գրույթները, այլ ընդհակառակը, ոգտվում եյին նրանցից, վորպես փիլիսոփայական հիմք:

II. Այսուհետեւ պետք եռ անցնել մորերու Բոյլի աշխատանքների համառուս շարադրմանը: Նա կարծում եր, վոր «քիմիական ելեմենտները բազկացած են մանրագույն մասնիկներից—կորպուսներից», վորոնք տարրերվում են իրարից մեծությամբ, ձևով և շարժումով, տարրեր ելեմենտների գեղագում, վոր ելեմենտների այդ կորպուսները կարող են գոյացնել ավելի խոշոր «Ճրդ կարգի կորպուսներ»: Բոյլի աշխատանքները նույնպես մտահայեցուական եյին, բայց նա փորձում եր բացարել գիտությանն արգեն հայտնի մի քանի փաստեր. Նա ճշտեց քիմիական ելեմենտի ու բարդ նյութերի գաղափարը. մինչ այդ, այդ գաղափարները զուտ փիլիսոփայական կատեգորիաներ եյին, և յերբեք կապված չեյին կոնկրետ նյութերի հետ:

III. Անհրաժեշտ եռ լուսաբանել Մ. Վ. Լոմոնոսովի հայացքները մատերիայի կառույցի մասին, վորոնք մոտ եյին Բոյլի տեսակետներին և նույնիսկ մի քիչ առաջ եյին անցնում նրանից: Հետո արդեն պետք եռ անցնել Դալտոնի թեորիայի համառուս շարադրմանը:

«1. Նյութը բազկացած եռ մանրագույն մասնիկներից—ատոմներից»:

2. Քիմիական անալիզը կարող եռ միայն անջատել այդ մասնիկները միմյանցից. սինթեզը կարող եռ միայն միացնել նրանց: Քիմիական պրոցեսների ընթացքում ատոմները վոչ քայլքայվում են, վոչ եւ վերստին գոյանում:

3. Յուրաքանչյուր քիմիական ելեմենտ բազկացած եռ միայն նրան հատուկ հասարակ ատոմներից, վորոնք տարրեր են մի ու-

<sup>1)</sup> Б. Н. Меншуткин—Химия и пути ее развития, стр. 11—12.

բիշ ելեմնտի ատոմներից։ Պարզ ատոմը միացություն կազմող կամ միացությունից ստացվող ելեմնտի մանրագույն մասնիկնեւ։ Ամեն մի միացություն բաղկացած է միայն իրեն հատուկ բարդ ատոմներից։ Որինակ, յերկաթի ատոմը նմանվում է յերկաթի մի ուրիշ ատոմին, բայց տարրերիցում և մի վորոն ուրիշ ելեմնտի ատոմից։ Զրի բոլոր բարդ ատոմները նման են իրար, բայց տարրեր են ամեն մի ուրիշ միացության բարդ ատոմներից։

4. Զափազանց կարենը և իմանալ ատոմների հարաբերական կարեր, վորը հանդիսանում է նրանց բնորոշ հատկությունը<sup>1)</sup>։

Անհրաժեշտ և աշակերտներին հասկացնել, վոր Դալտոնի աշխատանքներն արդեն հիմնվում են գիտական փաստերի վրա, գործնք Դալտոնը ձեռք եր բերել գաղերի հատկությունները, ինչպես և դիֆուզիայի յերեսը թներն ուսումնասիրելու հետևանքով։ Այդ աշխատանքներն արգեն պատասխանում եյին ձևափորված գիտության—քիմիայի բազմաթիվ հարցերին։ Այս կապակցությամբ անհրաժեշտ և կանգ առնել այն բանի վրա, թե ինչպես Դալտոնը փորձեց կիրառել իր ուսումնքը նյութերի միջև տեղի ունեցող ռեակցիաների նկատմամբ, ինչքան կարենը և նրա քիմիական սիմբոլիկայի սացինանալ սիմտեմը։

Վերջնին վրա համառոտ կանգ առնելով ու ցույց տալով սիմբոլիկայի նշանակությունը, պետք է այնուհետև անցնել բերցելիուսի աշխատանքին, վորը վերտակազմության յենթարկեց Դալտոնի քիմիական սիմբոլիկան։ Բերցելիուսը, 19-րդ դարի խոշորագույն քիմիկոսը, ատոմական թեորիայի ցայտուն պաշտպանը, վոչ միայն ավելի սացիոնալ ձեռվ «վերտակուցեց» Դալտոնի քիմիական ելեմնտների նշանները, այլև վագերացման մեծ ուժ տվեց Դալտոնի թեորիային։ Մինելով հիմնական անալիտիկ, նա իր սառույց աշխատանքներով այնքան ճշտեց ատոմական (հարաբերական) կշիռները, վոր վերջիններս քիչ են տարբերվում ժամանակակիցներից։

Դալտոնի աշխատանքները քիմիայի զարդացման համար այնքան կարենը նշանակություն ունեցան, վոր Ենդելսն անվանեց Դալտոնին «ժամանակակից քիմիայի հայր»։ «Քիմիայում նոր նպաստն սկսվում է ատոմիստիկայից, այդ պատճեռով վոչ թե կազուադյեն, այլ Դալտոնն և ժամանակակից քիմիայի հայրը»<sup>2)</sup>։

1) Б. Н. Меншуткин—Химия и пути ее развития, стр. 159—160.

2) Ենդելս—Բնության գիտելիութիւնները, ուսու. III հրատ. 1930 թ. էջ 145։

Պատմական համառոտ ակնարկեց հետո, պետք է պարզութեն Յըրկնել ատոմա-մոլեկուլային ուսմունքն իր կլասիկ ձևով։ Միաժամանակ պետք է կը կնել նաև հեղուկների ու գազերի դիֆուզիայի գերաբերյալ սովորական փորձերը։

Ատոմա-մոլեկուլային ուսմունքի պատմական ակնարկը չպետք է թողնի աշակերտության այն համոզման մեջ, թե մոլեկուլն ու ատոմը մինչև այժմ ել հանդիսանում են միայն «վորոշ որինաչափությունների պայմանական արտահայտություններ»։ Աշակերտությունը պետք է հաստատ իմանա, վոր մոլեկուլներն ու ատոմները ժամանակակից գիտության համար որյեկտիվ իրականություն են, վորոնք արտահայտվում են բոլոր, գիտության հայտնի, ֆիզիկական ու քիմիական յերեսութների մեջ։ Ատոմա-մոլեկուլային թեորիայի տեսակետից միանգամայն հասկանալի ու շոշափելի յեն գտնում ֆիզիկայի ու քիմիայի հիմնական կանոններն ու որենքները։ Այսուհետև, վորպես այդ գրույթի ցայտուն որինակ, ատոմա-մոլեկուլային տեսակետից լուսաբանվում են նյութերի կշիռների պահպանության ու բաղադրության հաստատունության որենքները։

Միաժամանակ պետք է շատ խնամքով կը կնել աշակերտների հետ ու ամրացնել քիմիական սիմբոլիկայի հիմնական դրույթները։

Յեթե նույնիսկ առաջներում այդ հարցի վրա բավականաշափուագություն դարձվել է, միենույն ե, պետք է ավելորդ անգամ պարզուաց կը կնել, վոր, որինակ, քիմիական ելեմնտի նշանը պայմանական արտահայտությունն ե այդ ելեմնտի (ֆիզիկական ու քիմիական) հատկությունների գումարի, վոր ատոմի մասսան քիմիական ռեակցիաների ժամանակ մնում ե անփոփոխ։ Այդ պատճառով ատոմների թիվը մոլեկուլի մեջ արտահայտող ինդեքսը չի կարող կոտորակային լինել ավագալ նյութի մոլեկուլն ըստ իր բազագության միշտ նույնն ե (բազագության հաստատունության որենք), այդ պատճառով ել քիմիական ռեակցիան հավասարումով արտահայտելիս մոլեկուլային ֆորմուլը չի կարող կամայականորեն փոփոխվել, իսկ քիմիական ռեակցիայի հավասարումը նյութերի կշիռի պահպանության որենքի հետ համաձայնեցնելն իրագործվում է գործակիցների ոգնությամբ։

Այսական արդեն տեղին ե ստուգել, թե ինչքան հստակ կերպով տարրերում են աշակերտները «ատոմի կշիռ» և «ատոմական կշիռ» գաղափարները։

Յեթե դասատուն անհրաժեշտ գտնի տալ աշակերտներին տարրական գաղափար ատոմական կշիռները վորոշելու մասին, կարելի յե պատմել ատոմական կշիռների վորոշման մասին ըստ կանոնցարոյի մեթոդի: Կանոնցարոյի ատոմական կշիռները վորոշելու մեթոդը, ինչպես հայտնի յե, կայանում է նրանում, վոր վորոշում և տվյալ ելեմնատի քանակը յուրաքանչյուր նրա կազմած միացության զրամմուկուլի մեջ: Յեթե այդ (սովորաբար ցնդող) միացությունների թիվը մեծ է, ապա արտախով ստացած թիվերց նվազագույնը ներկայացնում է հենց վորոնփող ատոմական կշիռում: Հստ ինքյան հասկանալի յե, վոր պետք է ավելացնել, վոր ժամանակակից գիտությունն իր արամադրության տակ ունի ավելի ճգրիտ մեթոդներ ատոմական կշիռները վորոշելու:

Ամենապարզ գործութիւնը գտնելն ըստ անալիզի տվյալների կրկնվում է խնդիրներ լուծելու միջոցով, վորի համար կարելի յե հանձնարարել հետեւյալ ձևը, վորը շատ հարմար և մեծ քանակությամբ նման լուծումների զրանցման համար:

Միացության մեջ մասող ելեմնատները	Տակառակին բարձր պրոցեսուները	Առանձիան կշիռը	Առանձիան հարաբերական թիվը մոլեկուլի մեջ	
			Արտահայտ- ված կուռո- րակով	Պարզագույն փորմուլը
K . . . . .	56,52	39	1,45	2
C . . . . .	6,7	12	0,725	1
O <sub>2</sub> . . . . .	34,78	16	2,17	3

Լուծումը կայանում է նրանում, վոր տոկոսային բարձրությունը (անալիզի տվյալները) բաժանում են ատոմական կամքրա, ստացվում է «ատոմական ֆակտորը», այսինքն՝ ատոմների հարաբերական թիվը մոլեկուլում: Այդ թիվը կարող է նաև կոտարակային լինել: Բաժանելով ստացած թիվը՝ ամենափոքրի վրա, կատանանք պարզագույն փորմուլի արտահայտությունն ամրող թվերով: Մոլեկուլային փոքրութիւնը վորոշումն ըստ գոլորշների խտության նոր և ուսումնասիրքի 10-րդ դասարանում: Սակայն, դա կրկնելլ ևս անհրաժեշտ է: Յեթե մոլեկուլայի կրոի վորոշման փոքրն իր ժամանակին դրված չի յեղեւ այսակող դեռ ուշ չե կա-

տարել (հազվագյուտ դպրոցում դրա համար անհրաժեշտ պայմանները չկան): Մոլեկուլյար կշռի վորոշումը ևս ավելորդ չի լինի կրկնելը Միանգամայն անհրաժեշտ է կրկնել նաև գաղաքին օրենքի կայուն դասագրքի մատերիալը չգերազանցող ծավալով: Գրամքը կայուն դասագրքի մատերիալը մոլեկուլը գրամ-ատոմ, գրամ-եկվալենտ հասկացողություններն ամրացվում են հիշված գրությունները կրկնելու պրոցեսում: Այդ առարկան պարզում պետք է ձգտել վոր աշակերտները միանգամայն պարզ տիրապետեն հիշված հասկացողություններին, վարվեն նրանց հետ առանց վորեն գժվարության: Սա հաջողվում է միայն սեծ քանակությամբ խնդիրներ լուծելու վարժությամբ:

Վերևում առաջարկած ժամերի բաշխումից այս բաժնից խնդիրներ լուծելու համար շատ ժամանակ և հատկացված: Այդ ժամանակը պետք է ոգտակար կերպով գործադրել: Դասառուն անգամ պետք է վերստին ցույց տա և բացատրի խնդիրներ լուծեդեպ պետք է վերստին ցույց տա և բացատրի խնդիրները: Այն դասերին, յերբ լուծեներին վերաբերյալ գժվարությունները: Այն դասերին, յերբ պետք է խնդիրներ լուծենել դասառուն պետք է առանձնապես պատճի ու բազմակողմանուրեն նախապատրաստվի: այս տիպի աշխատանքները կատարելիս պետք է հոգ տանել ժամանակի խնդիրության մասին, պետք է ընտրել ու համապատասխանուրեն դասավորել տարրեր գժվարության խնդիրները:

Պետք է նշել, վոր կայուն դասագրքում աստղով նշանակված խնդիրները նախատեսված են զլիամփորապես կրկնությունների համար 10-րդ դասարանում: Այդ խնդիրների մեջ մասը միանգամայն անհրաժեշտ է լուծել վորովհետեւ այդպիսի բարդացըրած խնդիրների գիտական լուծումը կվկայի, վոր աշակերտները տիրապետում են քիմիայի հիմունքներին:

Այդ ընդհանուր գրությունների կրկնության ժամանակ պետք է կրկնել նաև այնպիսի «սովորական», բայց հաճախ վատ հասկած պարզապես կամքրա, ինչպես «ելեմենտ» և «պարզ նյութ», կացված գաղափարներ, ինչպես «ելեմենտ», «քիմիական ռեակցիա», «նյութի քիմիական հատկություն», «քիմիական ռեակցիա», «քիմիական ռեակցիաների տիպեր»: Դժբախտաբար կայուն դասաւորքը ըն առաջ գաղափարների հստակ սահմանումները:

Միջնակարգ գպրոցի համար, «ելեմենտ» և «պարզ նյութ» գաղափարների վերջնական սահմանումը պետք է տալ առողմի կառապեցի մասին տեղեկությունները կրկնելուց հետո: Այդ սահմանումը կարող է լինել որինակ, այսպես «ելեմենտը դա կորիպի միենույն լիցքն ունեցող ատոմների հավաքածու յի» (պրոֆ. Սակիրին), կամ «ելեմենտը դա միանման ատոմների ձևն է»: Առօրին,

կառուցյի, վալենցի հարցը հնարավոր ե և բավական և շարագրել կայուն դասագրքի ծավալով, վորովհետև այդ նյութի ծավալն ընդարձակելու փորձերը, շատ գեղքում, առաջ են բերել շփոթություն աշակերտների գլխում: Դա առաջ ե գալիս նաև այն հանգամանքից, վոր աշակերտներին հանձնարարելու համապատասխան զրահականությունն չկա, յեղած գիտական հանրաժամատչելի գրականությունն առոմի կառուցյի հարցի շուրջն այնքան մեծավավագլ ե, վոր այդ կարգալու համար շատ մեծ ժամանակի և պահանջում ի հարկե, ուսուցիչը կարող ե (յեթե ինքը բավական տիրապետում և այդ հարցին) պատմել այն հիմնականը, վորին հասել ժամանակակից գիտությունն այդ հարցում, բայց պահանջել աշակերտից այդ հարցի մանրամասնությունների գիտենալը միանգամայն անթույլատրելի յե:

Շատ ավելի կարենոր և ամրացնել առոմի կառուցյի վերաբերյալ կասիկ պատկերացումների հիմքը, զլխավորապես քիչ փոխությունները (ոքսիդացման—ոեղուկցման պրոցեները, վա-

«Նյութի քիմիական հատկությունը» աշակերտները պետք ե սահմանեն վորպես հատկություններ, վորոնք արտահայտվում են նյութերն իրար հետ ոեակցելիս և վորոնք ուղեկցվում են նրանց փոխադարձ ձևափոխություններին: Քիմիական ոեակցիան կարելի յե սահմանել վորպես նյութերի փոխարկման պրոցես:

### III

Ինչպես վերև արդեն ասվեց, «Ոքսիդներ: Հիմքեր: Թթուներ: Աղեր» թեմայի կրկնությանը պետք ե բացառիկ ուշադրություն հաստատ յուրացման խոսք անգամ լինել չի կարող խակական քիշնական դասերի ընդհանուր հատկությունների հիմեկայացուցիչների անհատական հատկությունները և առանձին ներպետք ե լավ իմանան, և այդ տեսակետից, միջնակարգ գպրոցն ավարտողներին պետք ե շատ խիստ պահանջներ առաջարել:

Նյութերի այդ ընդհանուր և անհատական հատկությունների լավ յուրացմանն են նվիրված կրկնողության այս և հաջորդ

Քիմիական միացությունների հիմնական դասերի հատկությունների կրկնության հետեւանքով աշակերտները պետք ե կարողանան բնորոշել ամեն մի նյութ (նյութերի դասը) հետեւյալ ժամանակով.

1. Գաղափարների սահմանումը (վոր միացություններն են կոչվում ոքսիդներ, հիմքեր և այլն):

2. Տվյալ դասի նյութերն ստանալու յեղանակները:

3. Ֆիզիկական հատկությունները (առանձին ներկայացուցիչների համար):

4. Քիմիական հատկությունները (փոխազգեցությունն այլ դասերի նյութերի հետ):

5. Կասիփիկացիան:

Ոքսիդների հիմքերի, թթուների և աղերի հատկությունները կրկնելու համար կարելի յե առաջարկել պրակտիկայով ստուգված հետեւյալ յեղանակը:

Դիցուք թե կրկնվում են թթուների դասի հատկությունները:

Ամենից առաջ պետք ե վոր աշակերտները դիտեն (ավելորդ անգամ) կարենորագույն կոնցենտրիկ թթուները. ծմբականը, ազոտականը, ֆոսֆորականը, աղաթթուն և այլն: Թող աշակերտները վորոշեն գույնը, ցնդելիությունը, լուծելիությունը ջրի մեջ (լավ ե ցույց տալ ջրում անլուծելի թթուները) և, յեթե հնարավոր ե, նրանց տեսակարար կշռները: Այնուհետև պետք ե փորձեր ցույց տալ կարենորագույն թթուների ուժը վորոշելու համար (ոեակցիան մետաղների հետ) և տալ «թթվի ուժ» հասկացողության ձևակերպումը:

Տվյալ գեղպետման ավելի լավ կլիներ սահմանումը տալ իրնական թեմրիայի տեսակետից (ջրածնի դիսոցման ժամանակ իրների առաջանալու աստիճանը<sup>1)</sup>): Հակառակ գեղքում կարելի յե և սովորական սահմանումը տալ. «Թթուն մի նյութ ե, վորն անպայման ջրածին ելեմնու և պարունակում: Վերջինս այն հատկությունն ունի, վոր (յերբ թթուն լուծույթում ե) կարող ե փոխարինվել մետաղով, տալով աղ և ջրածին—պարզ նյութը»: Այս սահմանումից կարելի յե, ի հարկե, դուրս հանել այն ցույցմունքը, թե ինչ պայմաններում ե թթուն սեակցում մետաղների հետ:

Դրանից հետո թթուները կարելի յե բաժանել թթվածնավոր և անթթվածին, ուժեղ և թույլ, ինչպես նաև ըստ հիմնայնության: Թթուների քիմիական հատկություններից մանրամասն պետք ե կրկնել.

<sup>1)</sup> Շատ գպրոցներում աշակերտներին համառոտ տեղեկություններ ե առը-գումելեկարսիակայի թեսրիալից, չնայած վոր գա ծրագրում չկա:

ա) Թթուների փոխազդեցությունը պարզ նյութերի հետ (գլխավորապես մետաղների): Աշակերտները պետք եւ իմանան, թե վոր մետաղները ջրածինը գուրս են մղում թթուներից (լարման շաբք): Գետք եւ ուսումնասիրել նաև սեղուկցման ռեակցիաների (պարզ նյութերով) որինակները: Վորպես որինակ պետք եւ կըրկնել ծծմբական թթվի ռեակցիան պղնձի հետ ( $H_2SO_4$ -ի ռեզուլցումը մինչև  $H_2SO_3$ ), ազոտական թթվի ռեակցիան ածխի հետ և ուրիշները, տալ մի շաբք վարժությունները ու խնդիրները, վորոնց նպատակներազեկ աշակերտների հասկացողաւթյունը՝ թթուների ու մետաղների միջև տեղի ունեցող ռեակցիաների պայմանները:

բ) Թթուների ռեակցիան ոքսիդների հետ:

Գետք եւ կրկնել գունավոր աղերի առաջացումը ցույց տվող եփեկտիվ փորձերը ( $CuSO_4$ ,  $NiSO_4$  և այլն):

գ) Թթուների ռեակցիան հիմքերի հետ:

Ռեակցիաներ անլուծելի (թույլ) հիմքերի հետ: Զեզոքացման ռեակցիան իոնական թեորիայի տեսակետից (յեթե ելեկտրոլիտիկ դիսոցիացիայի թեորիան ուսումնասիրված է):

դ) Թթուների փոխազդեցությունն աղերի հետ:

Թթուների ու աղերի մեծ մասի ստացման կարևորագույն յեղանակները: Թթուների ու աղերի փոխազդեցության պայմանները: Բերտուկի կանոնը:

բ), գ), դ) Կետերում նշված հատկությունները կարեք ունեն մեծ թվով վարժությունների ու խնդիրների: Հատկապես ուշագրություն պետք եւ դարձնել այն բանի վրա, վոր աշակերտներն իմանան յեզրակացություն անել հավասարակշռության բնույթի մասին վոչ միայն լուծելիության աղյուսակի ոգնությամբ, այլ ամենաբնորոշ դեպքերում նաև առանց նրան: Այս դիտողությունը վերաբերում եւ նաև աղերի փոխանակման ռեակցիաներին:

Աշակերտներին հասկացնելու համար, վոր այդ հանդամանքը հաշվի պետք եւ առնել ամենալավ յեղանակն եւ մինչև վերջը գնուցող և չգնացող ռեակցիաների կենդանի ցուցադրումը (լաբորատոր կամ գեմոնատրացիոն ձևով): Կրկնելիս ժամանակ չպետք եւ խնայել լարորատոր աշխատանքների համար: Փորձելը ցույց են տալիս, վոր կրկնությունների ժամանակ եքսպերիմենտները յուրացվում են ավելի խոր և կարող են խնայել դասատուի շատ ջանքերը: Քիմիական միացությունների այլ գասերի ընդհանուր հատկությունների կրկնությունը կարելի յեւ հիմնականում կառուցել նույն սկզբունքով, այսինքն դիտել կոնկրետ նյութերը և ծանոթա-

նալ նրանց բնորոշ, ընդհանուր, մյուս դասերից տարրերող համակությունների հետ, յուրացնել ամեն մի ներկայացուցչի ֆիզիկական հատկությունները: տալ գաղափարի սահմանումը. իմանալ ստացման յեղանակները և, վերջապես, մանրամասն բնորոշել քիմիական հատկությունները:

Ամեն մի առանձին գեղքում աշակերտները պետք եւ վարժություններ կատարեն և յուրացնեն շատ թվով կոնկրետ որինակներ: Դրա համար 10-րդ դասարանում արգեն վոչ մի արգելք չկա: Փորձը ցույց եւ տալիս, վոր քիմիական միացությունների հիմնական դասերի բազմակողմանի յուրացմանն ոգնում եւ ընկը. Գ. Շապովալենկոյի առաջարկած հասարակ աղյուսակը (Միջնակարգ գպրոցի ինստիտուտ):

Այդ աղյուսակն աշակերտները պատրաստում են իրենց տեսրերի մեջ և ոպտիկով նրանից, նրանք վարժվում են բնորոշել նյութերի հատկությունները լիակատարությամբ (տես աղյուսակը):

Աղյուսակում, վորի մասին կարելի յեւ դատել առաջարկած նմուշից, կան տիպային ռեակցիաներ, վորոնք բնորոշ են տվյալ գույք նյութերի փոխազդեցության համար, և կա ցուցմունք այդ ռեակցիաների ընթանալու պայմանների մասին: Այդ աղյուսակի եփեկտն ստուգվել եւ հեղինակի կողմից մի շաբք տարբիների ընթացքում. աղյուսակը կարելի յեւ առաջարկել գլխավորապես կըրկնելու համար քիմիական միացությունների հիմնական դասերի հատկությունները:

#### IV

Քիմիական ելեմենտների հատկություններն ըստ խմբերի կլինելու համար կարելի յեւ առաջարկել հիմնականում, նույն հաջորդականությունը (մի փոքր կրճատված ձևով), ինչ վոր քիմիական միացությունների հիմնական դասերը կրկնելիս: Կրկնություններ անելիս, վորն այժմ պետք եւ հիմնվի բացառապես պարբերական որենքի վրա, մենք, որինակ՝ վարդում ենք այսպես ցուցադրում ենք պարզ նյութեր, որինակ՝ քրոր (փակ գլաններում), բրոմ՝ անգույն սրվակի մեջ, յոդ, վորոշվում են նրանց գույքում, վիճակը, լուծելիությունը ջրում, յոդինը—սպիրտում, բրոմի համար—ցնդելիությունը, յոդի համար—սուրլիմացիայի յերեսույթը՝ Այսուհետեւ հալոգենների ստացման փորձեր են դրվում (լա-

Քիմիական միջոցների հիմնական գույքի բնույթի վեցը

$\eta_{\text{արդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\eta_{\text{էրդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\eta_{\text{էրդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\zeta_{\text{ինդ}} \rho_{\text{եր}}$	$\theta \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\eta_{\text{լու}} \rho_{\text{եր}}$
1	6 $2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$ $\text{CO}_2 + 2\text{Mg} = 2\text{MgO} + \text{C}$	7 $\text{SiO}_2 + \text{PbO} = \text{PbSiO}_3$ $\text{H}_2\text{SiO}_3 + \text{H}_2\text{O} = \text{H}_2\text{SO}_4$ $\text{CaO} + \text{H}_2\text{O} = \text{Ca}(\text{OH})_2$	KOH + CO <sub>2</sub> → KOH + H <sub>2</sub> SO <sub>4</sub> → KOH + HCl →	$\frac{8}{\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}}$ $\frac{9}{\text{MgO} + \text{H}_2\text{SO}_4 = \text{MgSO}_4 + \text{H}_2\text{O}}$	10 —
11	12 $6\text{KClO}_3 + 5\text{KCl} = 3\text{H}_2\text{O}$	20 $2\text{NaOH} + \text{SO}_2 = \text{Na}_2\text{SO}_3 + \text{H}_2\text{O}$	—	$\frac{13}{\text{Cu}^{(\text{O})}\text{H}_2 + \text{HCl} \rightarrow}$ $\frac{14}{\text{KOH} + \text{H}_2\text{SO}_4 \rightarrow}$ $\frac{15}{\text{KOH} + \text{HCl} \rightarrow}$	16 $\text{CuSO}_4 + 2\text{KOH} \rightarrow$ $\text{Cu}(\text{OH})_2 + \text{K}_2\text{SO}_4$ $(\beta_{\text{եր}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \beta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$
16	17 $\text{H}_2\text{SO}_4 + \text{Zn} \rightarrow$ $\text{H}_2\text{SO}_4 + \text{Cu} \rightarrow$ $2\text{H}_2\text{SO}_3 + \text{O}_2 = 2\text{H}_2\text{SO}_4$	18 $\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} \cdot \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	19 —	$\frac{20}{\text{NaCl} + \text{H}_2\text{SO}_4 =}$ $= \text{HCl} + \text{NaHSO}_4$ $(\beta_{\text{եր}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \beta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$	20 —
21	22 $\text{CuSO}_4 + \text{Zn} \rightarrow$ $(\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$	23 $\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} \cdot \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	24 $\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} \cdot \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\frac{25}{\text{NaCl} + \text{AgNO}_3 \rightarrow}$ $\text{AgCl} + \text{NaNO}_3$ $(\beta_{\text{եր}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \beta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$	25 —
21	22 $\text{CuSO}_4 + \text{Zn} \rightarrow$ $(\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$	23 $\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} \cdot \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	24 $\eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} \cdot \eta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}}$	$\frac{25}{\text{NaCl} + \text{AgNO}_3 \rightarrow}$ $\text{AgCl} + \text{NaNO}_3$ $(\beta_{\text{եր}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}} - \beta_{\text{լու}} \rho_{\text{ւնդ}} \text{ն}_{\text{լու}} \rho_{\text{եր}})$	25 —

բորատոր փորձ՝ հալոգեններից մեկի ստացման համար և գենոն-ստրացիոն՝ մյուսների համար՝ ժամանակը խնայելու նպատակով): Նույն ձեռվ վարդում են ջրածնական միացություններն ստանալու փորձերը գնելիս: Դրանից հետո պարզվում են խմբի առանձին ելեմենտների առանձնահատուկ հատկությունները և, վերջապես, կրկնվում են խմբի ելեմենտների ընդհանուր հատկությունները, ինչպես նաև տրվում են անհրաժեշտ վարդություններ (խնդիրներ): Ճիշտ նույն ձեռվ վարդում են թթվածնի (6-րդ) և աղոտի (5-րդ) խմբերի հետ:

Հատկապես ընդգծվում են այսեղ ստացվող թթուների, ոքսիդների անհատական հատկությունների բնորոշումը: Վերջում սովորական ընդհանրացում և արվում պարբերական որենքի լուսարանությամբ:

Այս վերջին աշխատանքով մենք մի անգամ ևս սովորեցնում ենք աշակերտներին լիակատար չափով ոգտվել պարբերական սիստեմից:

V

Բոլորովին չպետք է կրճատել ծրագրի վերջին, ծավալով բուլորովին փոքր, բայց իրեն նշանակությամբ հակայական բաժինը՝ «ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության քիմիացիայի հարցերը»:

Չպետք է յերբեք վարվել այսպես, ինչպես ուս յեղել և միքանի դպրոցների աշխատանքի պրակտիկայում անցյալ տարի, այն, վոր այդ դասերը բոլորովին չդրվեցին: Դա պատճառաբանվում եր նրանով, թե յերկը քիմիացման մասին ամբողջ չորս տարվա ընթացքում խովել և առանձին թեմաներ ուսումնական վայրեւ աշխատանքն այդպես և ընթացել դա ի հարկե լավ ե, բայց ավելի հարցին հատկացրած 2 ժամում պետք է վոչ այնքան ամփոփվի այն, ինչ արվել և այս կամ այն միացության տնտեսական նշանակության մասին, վորքան պետք է պատկերվի քիմիական արդյունաբերության հոկայական զարգացումը ԽՍՀՄ-ում 20 տարում, վոր անցել և չուղարկերդյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության ժամանակվանից, և արվի քիմիական գիտության ու արդյունաբերության զարգացման հեռանկարը հաղթական սոցիալիզմի պայմաններում: Այս զրոյցները պետք է հուզականորեն հագեցված լինեն, պետք և գրավեն աշակերտներին և

Հանկություն զարթեցնեն նրանց մեջ հետագայում այս առարկա-  
յի վրա աշխատելու:

Ուսուցչի պարագաստված լինելուց, նրա բուռն ցանկությու-  
նից և կախված այս յեզրափակիչ դասերի հաջողությունը: Սրա-  
նով դաստուն վերջացնում ե իր աշխատանքը. այս դասերին  
նու շատ համոզված, սովոր և բուռն կերպով պետք ե արտահայտի  
իր խորը համոզմունքը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության քի-  
միացման մեծ ապագայի մասին: Այսաեղ հարկավոր են թվեր,  
բայց միմիայն թվերը բավական չեն:

Յերկու կարճ դասերի ընթացքում, հանդիսատ, բայց համոզ-  
ված պատմելու ձևով, դասաւուն պետք ե ցույց տա, առա-  
ջինը՝ թե ինչ և յեղել քիմիական արդյունաբերությունը  
մինչև Հոկտեմբերյան Մեծ Սոցիալիստական հեղափոխությունը  
և ինչ և դասել յերկու և կես հսկայակների շինարարության  
հետևանքով: Պետք ե մի քանի որինակներ բնել, բայց նրանք  
ցայտուն պետք ե լինեն: Մեզ մոտ բոլորովին նոր ստեղծվել են  
մի շարք քիմիական արտադրություններ, ավելի ճիշտ ամրող  
քիմիական արդյունաբերությունը հեղափոխության զավակն ե:  
Անհրաժեշտ և ավելորդ անգամ մատնանշել քիմիայի պաշտպա-  
նական նշանակության մասին և հասուլ ասելությամբ նշել, վոր  
ժողովրդի թշնամիները ձգտում եյին քանդել առաջին հերթին  
հենց քիմիական արդյունաբերությունը:

Վերջապես պետք ե նշել, վոր քիմիան թագցնում ե իր մեջ  
նյութերի համարյա հեքիաթային փոխարկումների անսահման  
հնարավորություններ, վոր մեր յերկիրնունի հումույթի անսպառ  
աղբյուրներ և վոր հսկայական բնական հարստությունների այդ  
առկայությունը սոցիալիզմի յերկրի անպարտության կարևորա-  
գույն պայմաններից մեկն ե:

Պարագմունքները պետք ե վերջացնել ցույց տալով, վոր  
անվագա կոմունիստական հասարակության մեջ քիմիան կդադարի  
այլևս պատերազմի համար թույների ու պայթուցիկ նյութերի  
մատակարարողը լինելուց. նրա վողջ ուժերը կուղղվեն բնության  
դեմ, պայքարելու հողի առաւտության, մարդու առողջության և  
յերկրի ըախտավոր, կապիտալիզմի լծից ազատված տիրոջ հարմա-  
րությունների համար պայքար մղելու գործին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն . . . . .
2. Ի. Ն. Բորիսով—Քիմիական սիմբոլիկան 7-րդ դասարանում ուսումնակի-  
ռելու մեթոդիկայի մասին . . . . .
3. Ի. Ն. Բորիսով—«Ծծումը», «Ազոտ և ֆոսֆոր» թեմաների ուսումնական  
թյան կապակցությամբ, հիմնական քիմիական գաղափարների կրկնու-  
թյունն ու ամրացումը . . . . .
4. Լ. Մ. Սմորգոնսկի—Մհամագները միջնակարգ զպլոցի քիմիայի դասըն-  
թացում . . . . .
5. Լ. Ա. Գուրինին—Դասընթացի կրկնությունը 10-րդ դասարանում . . . . .

Պատ. Խմբագիր՝ Մ. Դանդյան  
Տել. Խմբագիր՝ հ. Վարդանյան

Սրբագրիչ՝ և Այցվազյան


Կոնտրոլ սրբագրիչներ՝ Վ. Ավագյան և Ա. Շահբաղյան  
Գլավլիս № Բ—3161

Հքատ 4461, պատվեր 122, տիրաժ 1000

Հանձնված և արտադրության 1938 թվի հունվարի 26-ին  
Ստորագրված և տպագրության 1938 թվի մարտի 13-ին  
6 տպ. մամ. հեղին. 5 մամ., 1 մամ. 38400 տպ. նիշ.

Գինը 2 ռ

Պետհատի 2-րդ տպարան, Յերևան, Նալբանդյան 5



ЧИСЛ 2 0.

?

УПРАВЛЕНИЕ СРЕДНЕЙ ШКОЛЫ НКП РСФСР

МАТЕРИАЛЫ  
К СОВЕЩАНИЮ УЧИТЕЛЕЙ

Х И М И Я

Госиздата 1938